



CRRC
Armenia



ԵՐԱՍԻԱ
ԸՆԿՈՒՆԿՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ



Հրանտ Մաթևոսյան
HRANT MATEVOSSIAN FOUNDATION

Համայնքային բազմաչափ աղքատությունը Հայաստանում

Լոռու, Ճիրակի և Տավուշի մարզերի համայնքային մակարդակում իրականացված հետազոտության արդյունքների հաշվետվություն

«Չամայնքային բազմաչափ աղքատությունը Հայաստանում» հետազոտությունն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամի կողմից, «Չամայնքային աղքատության հաղթահարում. կիրառական մոտեցումներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է չորս տեղական կազմակերպություններից կազմված կոնսորցիումի կողմից, ներառյալ՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը (ՀՌԿԿ-Հայաստան, կոնսորցիումի ղեկավար), Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (ՏՀՀԿ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) և Մաթևոսյան հիմնադրամը:

Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանում Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում բազմաչափ աղքատության վերաբերյալ հետազոտության արդյունքները: Այս զեկույցի բովանդակությունը հիմնված է առաջնային տվյալների հավաքագրմամբ իրականացված ուսումնասիրության վրա, ամբողջությամբ հեղինակների պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Զեկույցի կամ դրա առանձին մասերի վերահրատարակումը կամ վերարտադրությունը էլեկտրոնային կամ տպագիր տարբերակներով պետք է իրականացվի պատշաճ մեջբերումներով:

Մեջբերման օրինակ

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ.
(2023): Չամայնքային բազմաչափ աղքատությունը Հայաստանում: Երևան:
Եվրոպական միություն:

Հեղինակներ

Լուի-Ալասան Կասենյարդ-Վիոդ Սրբուհի Միչիկյան
Հրաչյա Խլղաթյան Ռայան Մեթյուզ
Սառա Մելքոնյան Արվին Ավանեսի

Խմբագիրներ

Սոնա Բալասանյան
Լիլիթ Եզեկյան
Հայկ Սմբատյան
Մարիամ Առաքելյան

ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամն իր խորին շնորհակալությունն է հայտնում իր բոլոր ներկա և նախկին աջխատակիցներին, ովքեր իրենց ներդրումն են ունեցել այս զեկույցի ստեղծման գործում: Թե՛ զեկույցը, թե՛ դրա հիմքում ընկած հետազոտությունը հնարավոր չէր լինի առանց տվյալների հավաքագրման բազմաթիվ մասնագետների, ասոցացված հետազոտողների և մեթոդաբանների, ինչպես նաև փորձագետների և խմբագիրների շարունակական ջանքերի:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© - 2023 - Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան:
Բոլոր իրավունքները պաշտպանված են
Արտոնագիր՝ Եվրոպական միություն

Հետադարձ կապ՝ crrc@crrc.am | crrc.am

ՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՅԻՆ

ՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՅԻՆ Ե՛ ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է ԽԱՍՑԵԱԳՐԵԼ ԿԱԳՄԱԿԱՆ և տարածաշրջանային սոցիալ-տնտեսական և քաղաքական մարտահրավերները՝ բարձրորակ հետազոտությունների և հետազոտական կարողությունների զարգացման միջոցով: Ստեղծվելով 2003 թ. որպես Յայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում գործող ՅՈՒՄՆԱԿԱՆԵՐԻ ցանցի մաս Եվրասիա համագործակցություն հիմնադրամի շրջանակներում ՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՅԻՆ Ե՛ ԿԱԳՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒԹՅՈՒՆԱԿ ԻՆՏԵՂՈՒԹՅՈՒՆՆ և նպատակ ունենալով ամրապնդել հասարակագիտական հետազոտությունները և հանրային քաղաքականության վերլուծությունը Յայաստանում: ՅՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՅԻՆ և միջազգային մակարդակով ճանաչվելու որպես հասարակագիտական հետազոտությունների առաջատար կառույց և ազդելու երկրում քաղաքականության մշակման օրակարգի վրա՝ հետևելով հետազոտական ամենաբարձր ստանդարտներին և ստեղծելով բարձրակարգ հասարակագետների կենտրոնակ համայնք:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՄ ԵՐԿՐՆԵՐԸ ՈՐՈՇԵԼ ԵՆ ՄԻԱՎՈՐԵԼ ԻՐԵՆՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ռեսուրսները և նպատակները: Նրանք միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ միաժամանակ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները: Եվրամիությունը պատրաստակամ է իր ձեռքբերումներն ու արժեքները կիսելու իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ..... | 3 |
| 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... | 4 |
| 2. ԲԱԶՄԱԶԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ..... | 6 |
| 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ..... | 8 |
| 3.1 Մեթոդաբանություն..... | 8 |
| 3.2 Դեպքը, տվյալների աղբյուրները և վերլուծության միավորը..... | 9 |
| 3.3 ԲԱԻ. չափելով աղքատությունը..... | 10 |
| 3.4 ԿԽԻ. չափելով COVID-19-ի նկատմամբ խոցելիությունը..... | 11 |
| 3.5 Աղքատության շեմ..... | 13 |
| 3.6 Մեթոդաբանական սահմանափակումներ..... | 13 |
| 3.6.1 Դաշտային աշխատանքներ..... | 13 |
| 4. ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... | 15 |
| 4.1 ԲԱԻ..... | 15 |
| 4.1.1 Ավելցուկների վերլուծություն..... | 15 |
| 4.1.2 Գերակայության վերլուծություն..... | 18 |
| 4.1.3 Զույգ-զույգ համեմատություններ..... | 20 |
| 4.2 ԿԽԻ..... | 22 |
| 4.2.1 Ավելցուկների և գերակայության վերլուծություն..... | 22 |
| 4.2.2 Զույգ-զույգ համեմատություններ..... | 22 |
| 5. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ..... | 25 |
| 5.1 ԲԱԻ արդյունքներ..... | 25 |
| 5.1.1 Չափականությունների և ցուցիչների ներդրումները..... | 26 |
| 5.1.2 Արդյունքները ըստ ցուցիչների..... | 27 |
| 5.2 ԿԽԻ արդյունքներ..... | 31 |
| 5.2.1 Չափականությունների և ցուցիչների ներդրումները..... | 31 |
| 5.2.2 Արդյունքները ըստ ցուցիչների..... | 33 |
| 6. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ..... | 36 |
| 6.1 Թիրախը՝ աղքատություն. հնարավոր քաղաքականություններ..... | 36 |
| 6.2 Նպատակադրման բարելավում. ավելի լավ հետազոտելով աղքատությունը..... | 37 |
| 7. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ..... | 39 |
| ՕԳՏԱԳՈՐԾԿԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ..... | 41 |
| ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԴԱԾՏԱՅԻՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐ..... | 42 |
| ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԲԱԻ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՇԵՄԵՐԸ..... | 48 |
| ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ԿԽԻ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՇԵՄԵՐԸ..... | 52 |

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՕԱՄՁՆ** Օքսֆորդի աղքատության և մարդկային զարգացման
նախաձեռնության
- ԱՖ** Ալքայր-Ֆոսթեր
- ԲԱԻ** բազմաչափ աղքատության ինդեքս
- ԿԽԻ** COVID-19 խոցելիության ինդեքս
- ՀՈՎԿ** Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
- ՏՁՀԿ** Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
- ԵՀՀ** Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
- ՏՏԿԱՀ** Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների)
ամբողջացված հետազոտություն
- ՀԲ** Համաշխարհային բանկ
- ՏՏ** տնային տնտեսություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը կազմվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)- Հայաստան հիմնադրամի կողմից՝ առաջնային տվյալների հավաքագրմամբ իրականացված հետազոտության և վերլուծության հիման վրա: Հետազոտությունն ուսումնասիրում է համայնքային մակարդակում բազմաչափ աղքատությունն ու COVID-19-ի նկատմամբ խոցելիությունը Հայաստանի հյուսիսային մարզերում Լոռիում, Ծիրակում և Տավուշում, որոնք, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի, համարվում են երկրի ամենաաղքատ մարզերը (Armstat 2020): Հետազոտությունն իրականացվել է տնային տնտեսությունների հարցման միջոցով՝ ներառելով շուրջ 2400 հարցվողի: Արդյունքում չափվել է համայնքների բնակիչների վրա ազդող բազմաչափ աղքատության հաճախականությունը և ինտենսիվությունը: Չափումն իրականացվել է Օքսֆորդի աղքատության և մարդկային զարգացման նախաձեռնության (ՕԱՄՁՆ) շրջանակներում Սաբինա Ալքայրի և Ջեյմս Ֆոսթերի կողմից իրականացված աշխատանքի հիման վրա, որը ներկայացնում է բազմաչափ աղքատության ինդեքսի կազմման մեթոդաբանություն (Santos and Alkire, 2011):

Այս աշխատանքի շրջանակներում ընտրված մեթոդաբանությունը չի սահմանափակվում բացառապես դրամական միջոցներով աղքատությունը չափելու ավանդական մոտեցմամբ: Փոխարենը այն ուսումնասիրում է աղքատությունը 5 չափականությունների միջոցով՝ հիմնարար կարիքներ (1), բնակարանային պայմաններ (2), կրթություն (3), աշխատանք (4), առողջապահություն (5): Նման չափումը թույլ է տալիս աղքատությունը հասկանալ ավելի համապարփակ կերպով և տեղական համատեքստին համահունչ: Հետևապես, աղքատությունը դրամական կամ սպառման հիմքով չափելու փոխարեն, ինչը հաճախ իրականացվում է աղքատության հետազոտություններում, այս բազմաչափ մոտեցումը փորձում է բացահայտել աղքատության տարբեր դրսևորումները՝ անբավարար բնակարանային պայմանները, սոցիալական ծառայությունների սակավ հասանելիությունը, առողջապահության խնդիրները, աշխատանքի հետ կապված զրկանքները և այլն: Նախկինում Ալքայր-Ֆոսթերի (ԱՖ) մեթոդաբանությամբ Հայաստանում իրականացված բազմաչափ աղքատության չափումն իրականացվել էր՝ տարանջատելով քաղաքային և գյուղական համայնքները: Այս հետազոտությունն, իր հերթին, նպատակադրված է որոշելու, թե արդյոք զրկանքներն ունեն հստակ օրինաչափություններ տարբեր համայնքներում: Սա օգտակար է աղքատության մեղմացմանն ուղղված ռազմավարություններ և համապատասխան օժանդակող ծրագրեր մշակելու համար: Այս հետազոտության արդյունքում համայնքային մակարդակում կազմվել է բազմաչափ աղքատության ինդեքս (ԲԱԻ) և COVID-19 խոցելիության ինդեքս (ԿԻԻ): Ինդեքսների վերլուծության արդյունքները ներկայացված են այս զեկույցում:

Այս հետազոտությունն իրականացվել է «Համայնքային աղքատության հաղթահարում. կիրառական մոտեցումներ» ծրագրի շրջանակներում՝ որպես դրա մեկնարկային հետազոտական փուլի մաս: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Հայաստանում գործող չորս կազմակերպությունից կազմված համընկերության կողմից, ներառյալ՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը (ՀՌԿԿ-Հայաստան, կոնսորցիումի ղեկավար), Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (ՏՀՀԿ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) և Մաթևոսյան հիմնադրամը: «Համայնքային աղքատության հաղթահարում. կիրառական մոտեցումներ» ծրագիրը եռամյա նախաձեռնություն է՝

բացահայտելու և մեղմելու աղքատության պատճառներն ու հետևանքները Հայաստանի երեք մարզում Լոռիում, Շիրակում և Տավուշում: Ծրագիրը նպատակ ունի նաև վերլուծելու այս մարզերի համայնքների հետագա փորձառությունը խթանելու Հայաստանում աղքատության կրճատման թիրախային մոդելների հնարավոր կիրառությունը: Եվրոպական միության օժանդակությամբ իրականացվող այս ծրագիրը նպատակ ունի նաև համախմբելու քաղաքացիական հասարակությունը և կառավարությունը ներկայացնող տարբեր դերակատարների՝ աշխատելու այս ծրագրի շրջանակներում լավագույն փորձի բացահայտման և փորձարկման միջոցով աղքատությունն ու խոցելիությունը մեղմելու ուղղությամբ: Այս հետազոտության արդյունքները հատկապես օգտագործվելու են կարողությունների զարգացման հետագա գործողությունների իրականացման համար և հատկապես ծառայելու են քաղաքացիական հասարակության այն կազմակերպություններին, ովքեր ներկայում գրառվում են այս երեք մարզում աղքատության հիմնախնդրին առնչվող գործողություններով և ջատագովությամբ:

Այս փաստաթուղթը ներկայացնում է մի շարք օգտակար բացահայտումներ և նորույթներ: Հայաստանում անցկացված նախորդ հետազոտություններում նկատված քաղաքային-գյուղական բաժանումը երևաց նաև մեր ուսումնասիրության մեջ: Թեպետ աշխատանքի և հիմնարար կարիքների չափականությունները պակաս ակնառու էին գյուղական համայնքներում, վերջիններում բնակվող հարցվողներն ավելի շատ դժվարություններ են ունենում բնակարանային պայմանների և առողջության հետ կապված, քան քաղաքային բնակավայրերի հարցվողները: Այնուամենայնիվ, քաղաք Սպիտակում, ի տարբերություն այլ քաղաքային համայնքների, հետևողականորեն գրանցվել են տարատեսակ զրկանքների ցուցանիշներ: Սա, սակայն, չի դրսևորվել ԿԽԻ-ի պարագայում, որտեղ տարբերությունները ավելի շուտ պայմանավորված են ցուցանիշների որոշակի ենթախմբով: Այնուամենայնիվ, ԿԽԻ-ի և ԲԱԻ-ի արդյունքները միանգամայն համանման էին այլ առումներով, ինչը վկայում է աղքատության և COVID-19-ի խոցելիության միջև հստակ կապի մասին: Ի վերջո, այս ուսումնասիրությունը նախանշեց մի շարք խնդիրներ, որոնք պետք է հասցեագրվեն Հայաստանում աղքատության վերաբերյալ հետագա հետազոտություններում: Մասնավորապես, բազմաչափ աղքատության հետազոտման մեթոդաբանությունների վերանայումը կարող է օգտակար լինել աղքատության մասին ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու համար: Մեկ այլ բացահայտում բխում է այս ուսումնասիրության շրջանակներում ստեղծված COVID-19-ի խոցելիության ինդեքսից: Ուսումնասիրությունը ցույց տվեց նման մեթոդաբանությունների օգտակարությունը՝ նմանատիպ այնպիսի խնդիրներ ուսումնասիրելու համար, ինչպիսիք են կլիմայի փոփոխության կամ տեղահանման նկատմամբ խոցելիությունը:

Զեկույցը սկսվում է բազմաչափ աղքատության ինդեքսի (ԲԱԻ) վերաբերյալ ակնարկով՝ ներկայացնելով նաև ԲԱԻ մոտեցման հիման վրա COVID-19-ի խոցելիության ինդեքսի (ԿԽԻ) կառուցումը: Հաջորդիվ ներկայացված է հետազոտության մեթոդաբանական ռազմավարությունը, ինչպես նաև հետազոտության նախագիծն ու մեթոդաբանությունը: Հաջորդող բաժինը վերլուծում է հետազոտության արդյունքները՝ մատնանշելով ուսումնասիրության առանցքային բացահայտումները, ինչպես նաև ընդգծում է քաղաքական կուրսում առկա բացերը, որոնք այս հետազոտության բացահայտումների շնորհիվ կարող են լրացվել:

2. ԲԱԶՄԱԶԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Աղքատությունը ավանդաբար չափվել է եկամտով: Բազմաչափ աղքատության ինդեքսը մոտեցում է, որը հաշվի է առնում աղքատության մի շարք այլ դրսևորումների չափումը նույնպես: Ինդեքսը կարող է ներառել բնակարանային պայմաններին, առողջությանն ու կրթությանը, ինչպես նաև բազմաթիվ այլ բնագավառների վերաբերող փոփոխականներ:

Բազմաչափ աղքատության համաշխարհային ինդեքսն (հայտնի որպես ԲԱԻ) ի սկզբանե ստեղծվել է չափելու աղքատության երեք չափականություն 104 երկրներում (Alkire and Santos 2010): Սակայն ԲԱԻ չափումը կարող է շատ ավելի կոնկրետ շրջանակներում ևս իրականացվել, օրինակ՝ կոնկրետ երկրում, ադմինիստրատիվ միավորում կամ ենթամիավորում: ԲԱԻ մեթոդաբանությունը կարելի է տեղայնացնել կոնկրետ համատեքստում՝ հաշվի առնելով տեղական արժեքները և աղքատության օրինաչափությունները. սրա շնորհիվ այս մոտեցումը դառնում է բավականին ճկուն և ճշգրիտ, եթե այն մշակվել և կազմվել է հիմնավոր կերպով:

ԲԱԻ-ը այնպիսի բնութագրիչներով է օժտված, որոնք հետաքրքիր կերպով տարբերակում են այն աղքատության եկամտային չափումից: Առաջին հերթին ԲԱԻ-ը չափում է աղքատության հաճախականությունը (այսինքն՝ քանի՞ մարդ է աղքատ) և ինտենսիվությունը (այսինքն՝ արդյո՞ք մարդիկ աղքատ են և եթե այո, ապա՝ որքանով): Երկրորդը, ինդեքսի բազմաչափ լինելը թույլ է տալիս ավելի ճշգրիտ չափել, թե աղքատությունն ինչից է կազմված: ԲԱԻ-ի կառուցվածքը հնարավորություն է տալիս սահմանելու, թե որ չափականություններն են պայմանավորում աղքատությունը բնակչության կոնկրետ շրջանակներում կամ կոնկրետ բնակավայրում: Իր հերթին նման մոտեցումը թույլ է տալիս իրականացնել աղքատության դրդապատճառների և հետևանքների ճշգրիտ ուսումնասիրություն:

ԲԱԻ հետազոտությունը Հայաստանում

Հայաստանում ազգային մակարդակում բազմաչափ աղքատության հետազոտություն իրականացվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, Համաշխարհային բանկի (ՀԲ) հետ համագործակցությամբ: ՀԲ-ը Ալքայր-Ֆոսթերի (ԱՖ) մեթոդի կիրառությամբ կազմել է բազմաչափ աղքատության ինդեքս: ԲԱԻ-ը կազմելու համար ՀԲ-ը օգտագործել է հինգ չափականություն՝ հիմնարար կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, աշխատանք և առողջապահություն (Armstat and World Bank 2022):

Մինչ ՀԲ-ի կողմից հաշվարկված ԲԱԻ-ը չափել է բազմաչափ աղքատությունը ազգային մակարդակում, տարանջատելով քաղաքային համայնքները, գյուղական համայնքներն ու Երևանը, այս հետազոտությունն ուսումնասիրում է երեք հյուսիսային մարզերում՝ Լոռիում, Ծիրակում և Տավուշում, համայնքային մակարդակում բազմաչափ աղքատությունը: Համայնքային մակարդակում չափումը բացահայտում է աղքատության հնարավոր օրինաչափությունները ավելի կոնկրետ տեղական մակարդակում: Իր հերթին, նման մոտեցումը թույլ է տալի բարելավելու հետագա վերլուծությունները և քաղաքական կուրսի որակը: Չնայած ՀՌԿԿ-Հայաստանի և Համաշխարհային բանկի կողմից կազմված ԲԱԻ-ները վիճակագրական իմաստով չեն կարող համեմատվել, այս ուսումնասիրությունը կարելի է համարել ՀԲ-ի կողմից իրականացված հետազոտության այլընտրանքային կրկնություն: Այս հետազոտությունը տրամադրում է արժեքավոր տեղեկատվություն ոչ միայն այս երեք մարզում

աղքատության մասին, այլև բազմաչափ աղքատության հետագա հետազոտությունների իրականացման և Հայաստանում համայնքային մակարդակում բազմաչափ աղքատության ինդեքսի հետագա բարելավման վերաբերյալ:

ԲԱԻ-ից դեպի ԿԽԻ

ԱՖ մեթոդաբանությունն օգտագործվել է նաև այլ հետազոտությունների շրջանակներում, օրինակ՝ COVID-19-ի խոցելիության չափման ուսումնասիրություններում: ՀՌԿԿ-Հայաստանը, օգտվելով ԱՖ մեթոդաբանությունից, ստեղծել է նոր ինդեքս՝ բացահայտելու, թե որ համայնքներն են առավել խոցելի COVID-19 համավարակի առողջապահական և տնտեսական հետևանքների նկատմամբ: Այս նպատակով, նմանատիպ նպատակ հետապնդող հետազոտություններ ուսումնասիրելուց հետո, տեղայնացվել է Հարավային Աֆրիկայի վիճակագրական ծառայության կողմից իրականացված հետազոտությունը (Statistics South Africa 2020): Սա ԿԽԻ փորձնական հաշվարկման առաջին նախաձեռնությունն է Հայաստանում: Կարելի է ակնկալել, որ ազգային մակարդակում այս ինդեքսի հաշվարկումը կարող է օգնել դասակարգել ամենախոցելի համայնքները՝ COVID-19-ի հետևանքները մեղմելուն ուղղված գործողությունների թիրախային պլանավորման և շրջանառման նպատակներով:

Չնայած COVID-19-ին վերաբերող ցուցիչների վերլուծության արդյունքները կարող են ավելորդ թվալ 2023 թվականի սկզբին, մենք վստահ ենք, որ այս ինդեքսի օգտակարությունն այլ հարցում է: Այս տիպի մեթոդը՝ ավելի մանրամասնորեն ներկայացված հաջորդ բաժնում, անկասկած կարող է ստեղծել բազմակողմանի և համատեքստին համապատասխան չափում որոշելու կոնկրետ խնդիրների նկատմամբ բնակչության խոցելիության մակարդակը: Օրինակ՝ կարելի է մշակել կլիմայի փոփոխության, տեղահանման կամ մեկ այլ նմանատիպ խնդրի նկատմամբ խոցելիության ինդեքս: Հետևապես, Հայաստանում այս նորարարական մեթոդի կիրառությունը քայլ է՝ ուղղված ավելի լավ ցուցիչների մշակման համար, որն էլ իր հերթին կարող է խթանել քաղաքական կուրսերի և մարդկանց կենսապայմանների բարելավումը:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Այս ուսումնասիրությունը փորձ է ստեղծելու երկու ինդեքս. ԲԱԻ՝ չափելու աղքատությունը և ԿԻԻ՝ չափելու COVID-19-ի նկատմամբ խոցելիությունը: Այս բաժինը ներկայացնում է հետազոտության մեթոդաբանությունն ու շրջանակները: Առաջին հերթին ներկայացվում է մեթոդաբանությունը և դեպքի ընտրությունը: Ապա ներկայացվում են համայնքային մակարդակում բազմաչափ աղքատության ինդեքսի կազմման հետ կապված համապատասխան գործողությունները, որին հաջորդում է նմանատիպ ակնարկ COVID-19-ի խոցելիության ինդեքսի հիմքում ընկած օպերացիոնալացման վերաբերյալ:

3.1 Մեթոդաբանություն

Այս ուսումնասիրության հիմքում Ալքայր-Ֆոսթերի (ԱՖ) մեթոդն է (Alkire et al. 2015), որով ԲԱԻ հաշվարկման հիմնական նպատակը սուր բազմաչափ աղքատության չափումն է: «Սուր բազմաչափ աղքատություն» եզրը հղվում է երկու բնութագրիչների. (1) միջազգայնորեն ընդունված նվազագույն չափանիշներին չհամապատասխանող պայմաններում ապրող մարդիկ՝ ըստ հիմնարար գործառնությունների (“functionings”)՝ ցուցիչների և (2) միևնույն նվազագույն չափանիշներին չհամապատասխանող պայմաններում ապրող մարդիկ՝ ըստ միաժամանակ մի քանի նման ցուցիչների: Մեթոդն իր բնույթով բազմաչափ է, քանի որ հիմնված է մի շարք ցուցիչների վրա՝ խմբավորված մի շարք չափականությունների ներքո, որոնք արտացոլում են աղքատության տարբեր կողմերը:

Որոշելու համար, թե ով է համարվում բազմաչափ աղքատ, օգտագործվել է երկակի շեմի («cut-off») մոտեցումը: Առաջին՝ *զրկանքի շեմը*, որոշվել է բոլոր ցուցիչների համար: Խոսքը այն շեմի մասին է, որն անցած անհատը համարվում է տվյալ ցուցիչով զրկանք կրող: Օրինակ՝ երբ չափահասների սննդի սպառումը ցածր է գտնվել սննդի աղքատության շեմից (ամսական կտրվածքով անձի համար 23,763 ԳՅ դրամ), տնային տնտեսությունը (SS) համարվել է զրկանք կրող: Երկրորդը՝ *աղքատության շեմը* (K), որոշում է (կշռված) ցուցիչների այն հարաբերակցությունը, որից ավելի լինելու դեպքում անձը համարվում է բազմաչափ իմաստով աղքատ: Օրինակ՝ այն անձինք, ովքեր զրկված են ցուցիչների մեկ երրորդից ավելիում, համաշխարհային ԲԱԻ-ի արդյունքներով համարվել են բազմաչափ իմաստով աղքատ:

Հաջորդիվ, ԱՖ մեթոդի համաձայն, բազմաչափ աղքատությունը չափվում է՝ երկու տեսակի տեղեկատվության համադրմամբ, որոնք անմիջականորեն կապված են սուր աղքատության վերը նշված երկու բնութագրիչների հետ. աղքատության հաճախականությունը (հայտնի նաև որպես քանակի հարաբերակցություն) և ինտենսիվությունը: *Հաճախականությունը* (H) վերաբերում է բազմաչափ իմաստով աղքատ համարված մարդկանց համամասնությանը: *Ինտենսիվությունը* (ա) կշռված այն ցուցիչների միջին համամասնությունն է, որոնցում մարդիկ համարվել են բազմաչափ իմաստով աղքատ: Ինդեքսը կազմվել է հաճախականության ու ինտենսիվության բազմապատկմամբ՝ ԲԱԻ = H x A, որը տատանվում է 0-ից 1 միջակայքում:

Այս երկու չափումների համադրումը ԱՖ մեթոդի յուրահատկությունն է: Երկու տարբեր երկրներ կարող են ունենալ հաճախականության միևնույն չափը, այն դեպքում, երբ կոնկրետ

¹ ԱՖ մեթոդում գործածվում է «գործառնություններ» տերմինը, որը Ամարթյա Սենի *ընդունակության մոտեցման* համաձայն՝ նշանակում է մարդկանց այնպիսի լինելիությունը և գործունեությունը, որը նրանք արժևորում են և պատճառ ունեն արժևորելու:

գրկանքների հմաստով աղքատության ինտենսիվությունը կարող է էականորեն տարբեր լինել: Մի երկրի աղքատ բնակչությունը, հնարավոր է, գրկված լինի ԲԱԻ չափման մեջ ներառված չափականությունների 1/3-ից, մինչդեռ մյուս երկրինը՝ այդ չափման 2/3-ից, չնայած որ երկուսն էլ կարող են ունենալ հաճախականության նույն ցուցանիշը: Նմանապես ԲԱԻ-ը կարող է մատնանշել աղքատության ուղղակի կրճատումը, քանի որ այն գրանցում է ոչ միայն աղքատության շեմը հաղթահարողների թիվը (հաճախականության կրճատում), այլև փոփոխությունները աղքատ մարդկանց կրած գրկանքներում: Հետևաբար, երբ մարդը այլևս գրկանք չի կրում ինչ-որ մի ցուցիչում, ԲԱԻ ցուցանիշը նվազում է, չնայած որ աղքատության հաճախականությունը շարունակում է մնալ անփոփոխ: Սա կարող է հզոր գործիք դառնալ պետությունների և կազմակերպությունների համար՝ մշտադիտարկելու բնակչության շրջանում աղքատության մակարդակի փոփոխությունները իրենց ամբողջության մեջ:

Աղքատության բազմաչափ չափումն իրականացվում է յոթ քայլի միջոցով՝

1. տվյալների աղբյուրի հստակեցում,
2. նույնականացման և վերլուծության միավորների ընտրություն,
3. չափականությունների և ցուցիչների ընտրություն,
4. գրկանքի շեմի հստակեցում,
5. չափականությունների և ցուցիչների կշիռների ընտրություն,
6. աղքատության շեմի հստակեցում,
7. ԲԱԻ-ի հաշվարկում:

Հավելյալ քայլ է նաև տվյալների տարանջատումը՝ ըստ չափականությունների, ցուցիչների և համապատասխան այլ ենթախմբերի: [Բաժին 4](#)-ը ներկայացնում է այդ արդյունքները: Ի վերջո, մեկ այլ ժամանակահատվածի վերաբերյալ տվյալների առկայության պարագայում արդյունքները հնարավոր կլինի համեմատել ժամանակի մեջ: Քանի որ սա Հայաստանում նման չափում իրականացնելու առաջին փորձն է, ժամանակային շարքերի վերլուծություն առայժմ հնարավոր չէ իրականացնել: Պետք է հաշվի առնել, որ վիճակագրական համեմատություններ կատարելու համար մեթոդաբանությունը պետք է լինի մինևույնը: Ահա թե ինչու ՀՌԿԿ-Հայաստանի և Համաշխարհային բանկի հաշվարկած ԲԱԻ ցուցանիշները չեն կարող ուղղակիորեն համեմատվել: Սակայն օգտակար կարող է լինել անդրադառնալ տարբեր մեթոդաբանությունների կիրառությամբ այս կամ այն չափականության մեջ ստացված նույն կամ հակադրվող արդյունքներ: Եվ ի վերջո, ստեղծված երկու ինդեքսների համար էլ կայունության վերլուծություն է իրականացվել: Այն թույլ է տալիս հաստատել հետազոտության նախագծման բարձր որակը և տեսնել ի հայտ եկած թերությունները: Այս զեկույցից զատ, հետազոտությունը կարևոր ներդրում է նաև Հայաստանում աղքատության չափման բարելավման գործում:

3.2 **Դեպքը, տվյալների աղբյուրները և վերլուծության միավորը**

Հայաստանում բազմաչափ աղքատության հետազոտություն իրականացվել է ազգային մակարդակում ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, Համաշխարհային բանկի (ՀԲ) հետ համագործակցությամբ: Այդ նախկինում արված հետազոտությունը, հիմնված է եղել 2010-ից 2015 թվականներին Հայաստանում իրականացված Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության տվյալների վրա, որոնք ուսումնասիրում էին անհատների և ՏՏ-ների կրթության, աշխատաշուկայի պայմանները, առողջապահական վարքը և կենսապայմանները: Այս տվյալների հիման վրա ՀԲ-ը Հայաստանի համար իրականացրել է ԱՖ մեթոդով ԲԱԻ հաշվարկ: ԲԱԻ կազմելու համար

ՀԲ-ը օգտագործել է հինգ չափականություն՝ հիմնարար կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, աշխատանքի և առողջապահության հասանելիություն (Armstat and World Bank, 2022): Նույն չափականությունները օգտագործվել են նաև այս հետազոտության շրջանակներում:

ՀԲ-ի կողմից հաշվարկված ԲԱԻ-ը չափել է Հայաստանում բազմաչափ աղքատությունն ազգային մակարդակում տարանջատելով քաղաքային համայնքների, գյուղական համայնքների և Երևանի ցուցանիշները: Այս հետազոտությունը առաջին անգամ Հայաստանում ուսումնասիրում է Լոռիում, Շիրակում և Տավուշում համայնքային մակարդակում բազմաչափ աղքատությունը (Armstat 2020): Սահմանափակ աշխարհագրական շրջանակը թույլ է տալիս իրականացնել ավելի խորացված վերլուծություն՝ պահպանելով համեմատության բովանդակային շրջանակները:

Ինդեքսները կազմվել են՝ հիմնվելով այս նպատակով ՀՌԿԿ-Հայաստանի կողմից մշակված և իրականացված SS-ների հարցման արդյունքների վրա: Հարցման դաշտային աշխատանքները տեղի են ունեցել 2021 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 23-ն ընկած ժամանակահատվածում: Հետազոտության վերլուծության միավոր է ընտրվել SS-ն: Սա նշանակում է, որ բազմաչափ իմաստով աղքատ (կամ COVID-19-ի նկատմամբ խոցելի) մարդիկ նույնականացվել են SS մակարդակում (նույնականացման միավոր): Սակայն վերլուծությունն իրականացվել է անհատական մակարդակում (վերլուծության միավոր): ԱՖ մեթոդը ենթադրում է, որ միևնույն SS անդամ տարբեր անհատները կարող են ունենալ արտաքին հարաբերություն: Սա նշանակում է, որ նույն SS անդամները դրականորեն կամ բացասականորեն ազդում են միմյանց վրա: Հարցումն իրականացվել է շերտավորված և քլաստերավորված պատահական ներկայացուցչական ընտրանքով՝ երեք մարզերում ընդհանուր 2,406 SS-ներում: Հարցումն իրականացվել է դեմ-առ-դեմ համակարգչային աջակցությամբ անհատական հարցազրույցների (CAPI) մեթոդով: ՀՌԿԿ-Հայաստանը ունի այս մեթոդի կիրառության երկար տարիների փորձ: Առավել մանրամասն տեղեկատվություն ընտրանքի և դաշտային աշխատանքների վերաբերյալ ներկայացված են [Հավելված Ա](#)-ում:

3.3 ԲԱԻ. չափելով աղքատությունը

Չափականություններ և ցուցիչներ

ԲԱԻ-ին վերաբերող հարցերը կազմվել են՝ օգտագործելով Հայաստանում Տևային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտություն արդյունքները: Այս հարցերը օգտագործվել են ՀԲ-ի կողմից ԱՖ մեթոդաբանությամբ Հայաստանի ազգային բազմաչափ աղքատության ինդեքսի հաշվարկման ժամանակ:

ԲԱԻ-ը ներառում է հինգ չափականություն՝ հիմնարար կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, աշխատանք և առողջապահություն: Ընդհանուր առմամբ 24 ցուցիչ է կազմվել այս հինգ չափականությունների շրջանակներում: Այս հինգ չափականություններն ու իրենց հետ կապված ցուցիչները հիմնված են այն ցուցիչների վրա, որոնք ընտրվել են ՀԲ-ի կողմից ինդեքսի կազմման ժամանակ:

Չրկանքի շեմեր

Յուրաքանչյուր ցուցիչ ունի իրեն հատուկ զրկանքի շեմը՝ հասկանալու, թե ինչ պայմաններում է տվյալ SS-ը համարվելու զրկանք կրող: Արդյոք այս կամ այն ցուցիչով SS-ը զրկված է, թե ոչ՝ որոշվել է հարցման արդյունքում հավաքագրված տվյալներով: Որոշ ցուցիչներով զրկանքի

մակարդակը որոշվել է՝ ելնելով հարցաթերթում առկա մեկ համապարփակ հարցին տրված պատասխանից: Այլ ցուցիչներում զրկանքի մակարդակը որոշվել է մի շարք հարցերի պատասխանների համադրման արդյունքում: Քանի որ յուրաքանչյուր շեմի նկարագրությունը բավականին ծավալուն է, այն ներկայացվում է առանձին՝ **Հավելված Բ**-ում:

Կշիռներ

ԲԱԻ-ի շրջանակներում կիրառվող չափականությունների ու ցուցիչների ընտրությունից հետո, յուրաքանչյուրի համար որոշվել է կշռի չափ: ԲԱԻ հինգ չափականությունները կշռվել են հավասարապես՝ յուրաքանչյուրը 1/5 չափով: Յուրաքանչյուր ցուցիչ տվյալ չափման շրջանակներում ստացել է հավասար կշիռ, որը հնարավոր է դարձրել ունենալ այսպես կոչված, հավասարաչափ ներկառուցված կշիռներ: **Աղյուսակ 1** -ը ներկայացնում է ցուցիչների համար օգտագործված կշիռները:

Աղյուսակ 1. ԲԱԻ օպերացիոնալ տրամաբանություն

| Չափականություններ | Ցուցիչներ | Ցուցիչների կշիռը |
|-------------------------------|--|-------------------------|
| Հիմնարար կարիքներ | Ծայրահեղ պարենային աղքատություն Արժանապատիվ կյանք Մարդասիրական օգնություն Փոխանցումներից կախվածություն | 1/20 |
| Բնակարանային պայմաններ | Սուբյեկտիվ բնակարանային պայմաններ Պատշաճ բնակարանային պայմաններ Գերբնակեցում Առողջ ջեռուցում Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մշտական հասանելիություն Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն Հոսող տաք ջուր Հանրային ծառայությունների որակ Տրանսպորտի հասանելիություն | 1/45 |
| Կրթություն | Միջնակարգ կրթություն Կրթական հաստատության պարտադիր հաճախում Որակյալ կրթական ծառայություններ Կրթության հասանելիություն | 1/20 |
| Աշխատանք | Աշխատաշուկայի մասնակցություն Երկարաժամկետ գործազրկություն Արժանապատիվ աշխատատեղ | 1/15 |
| Առողջապահություն | Առողջապահական ծառայությունների մատչելիություն Սովորական գործունեության դադարեցում Առողջապահական ծառայությունների հասանելիություն Առողջապահական ծառայությունների որակ | 1/20 |

3.4 ԿԻՒ. չափելով COVID-19-ի նկատմամբ խոցելիությունը

Չափականություններ և ցուցիչներ

Օգտագործելով ԲԱԻ հաշվարկման համար հավաքագրված տվյալները՝ ԿԽԻ-ը չափում է բոլոր ութ համայնքներում տնային տնտեսությունների մակարդակում COVID-19-ի նկատմամբ խոցելիությունը: Հարավային Աֆրիկայի վիճակագրական ծառայության կողմից կազմված համանման ինդեքսը այս ԿԽԻ-ի հաշվարկման հիմքն է:

Նոր տվյալների կարիքը, ինչպես նաև հարցման հարցաթերթի երկարությունը նվազագույնի հասցնելու նպատակով ԿԽԻ-ը կազմվել է ԲԱԻ-ի ինը համապատասխան ցուցիչների և հավելյալ երեք ցուցիչների հիման վրա: Այս 12 ցուցիչները բաժանված են չորս չափականությունների՝ աշխատանք, կենցաղային ծառայություններ, տնային տնտեսության կազմ և առողջապահություն: Յուրաքանչյուր չափականություն ներկայացված է մի շարք ցուցիչներով: Յուրաքանչյուր ցուցիչին համապատասխանող հարցերը բխում են Հայաստանում COVID-19-ի նկատմամբ խոցելիության ընդհանուր համատեքստից: Այս բոլոր ցուցիչներն օգտագործվել են ԲԱԻ-ի հաշվարկման ժամանակ՝ բացառությամբ համացանցի հասանելիության, տարիքի և բազմասերունդ տնային տնտեսության ցուցիչների:

Ձրկանքի շեմեր

Խոցելիության և զրկանքի շեմերը, որոնք միաժամանակ օգտագործվել են ԿԽԻ և ԲԱԻ հաշվարկի համար, նույնն են: Երեք նոր ցուցիչների (համացանցի հասանելիություն, բազմասերունդ տնային տնտեսություն և տարիք) շեմերը ներկայացված են [Հավելված 9](#)-ում:

Կշիռներ

Ինչպես ԲԱԻ հաշվարկման ժամանակ, ԿԽԻ-ի դեպքում նույնպես օգտագործվել են հավասարաչափ ներկառուցված կշիռներ: [Աղյուսակ 2](#)-ը ներկայացնում է յուրաքանչյուր ցուցիչի համար կիրառված կշիռները:

Աղյուսակ 2. ԿԽԻ օպերացիոնալ տրամաբանություն

| Չափականություն (կշիռ) | Ցուցիչ | Կշիռներն՝ ըստ ցուցիչների |
|---|---|---------------------------------|
| Աշխատանք (1/4) | Աշխատաշուկայի մասնակցություն Երկարաժամկետ գործազրկություն Արժանապատիվ աշխատատեղ | 1/12 |
| Կենցաղային ծառայություններ (1/4) | Համացանցի հասանելիություն Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մշտական հասանելիություն Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն Առողջ ջեռուցում | 1/16 |
| Տնային տնտեսությունների կազմ (1/4) | Գերբնակեցում Բազմասերունդ տնային տնտեսություններ | 1/8 |
| Առողջապահություն (1/4) | Տարիք Առողջապահական ծառայությունների հասանելիություն Առողջապահական ծառայությունների մատչելիություն | 1/12 |

3.5 Աղքատության շեմ

Մինչ այս նշել ենք, որ ԲԱԻ-ը հաշվելու համար համադրվում է երկու տեսակի տեղեկատվություն՝ հաճախականությունը (H) և ինտենսիվությունը (ա): Հաճախականությունը հաշվարկելու համար, որը բազմաչափ իմաստով աղքատ մարդկանց համամասնությունն է, պետք է սահմանել աղքատության շեմը (K): Չշփոթելու համար նշենք, որ այս շեմը տարբերվում է նախորդիվ նշված անհատական ցուցիչների շեմերից: Աղքատության շեմը վերաբերում է ցուցիչների այն համամասնությանը, որոնցում անհատը գրկված է՝ հետևաբար կարող է համարվել բազմաչափ իմաստով աղքատ:

Երկու ինդեքսն ունեն տարբեր շեմեր: Եթե SS գրկանքի ցուցիչը .33-ից բարձր է (կամ գրկված է ցուցիչների 1/3ից ավելիում), այն համարվել է բազմաչափ իմաստով աղքատ և COVID-19-ի նկատմամբ խոցելի: Սա նշանակում է, որ ընդհանուր թվով 24 ցուցիչից 8-ում գրկված լինելու պարագայում SS-ը համարվել է բազմաչափ իմաստով աղքատ: Այս շեմը նույնն է, ինչ այժմ օգտագործվում է ՕԱՄՁՆ-ի կողմից՝ համաշխարհային ԲԱԻ-ի հաշվարկման գործընթացում (Alkire, Kanagaratnam, and Suppa 2022): ՀԲ-ի ԲԱԻ-ի հաշվարկում օգտագործվել է փոքր-ինչ ավելի ցածր շեմ (.25 կամ 1/4ի շեմը) (Armstat and World Bank 2022): Նույն շեմն օգտագործվել է ԿԽԻ կազմման ժամանակ: Հետևապես, 12 ցուցիչներից 4-ում գրկված լինելու պարագայում SS-ը համարվել է COVID-19-ի նկատմամբ խոցելի:

Այս որոշման ազդեցություններին, ինչպես նաև ՀԲ-ի շեմից ավելի բարձր շեմ սահմանելու նպատակահարմարությանն անդրադառնում ենք [Բաժին 4](#)-ում:

3.6 Մեթոդաբանական սահմանափակումներ

ԱՖ մեթոդաբանությունն ունի մի շարք սահմանափակումներ, որոնք տեղին են նշել նաև այս հետազոտության շրջանակներում ԲԱԻ հաշվարկ իրականացնելու ժամանակ: Ավելին՝ մի շարք մեթոդաբանական մարտահրավերներ ի հայտ են եկել ուսումնասիրության իրականացման փուլում: Այս մարտահրավերները պետք է հաշվի առնվեն Հայաստանում հետագա ԲԱԻ կամ ԿԽԻ առնչությամբ արվող աշխատանքներում:

Որոշ ցուցիչներում գրկանքի հաճախականությունն անմիջականորեն կապված էր SS ժողովրդագրական կազմի հետ: Օրինակ՝ այն SS-ները, որոնք չեն ունեցել դպրոցական տարիքի երեխա, կրթությանը վերաբերող մի շարք ցուցիչներով չեն համարվել գրկանք կրող: Բնակավայրի տեսակը՝ քաղաքային կամ գյուղական տիպ, հիմնովին որոշել է երկու ցուցիչի հարցում գրկանք կրել/չկրելու հանգամանքը, այդ ցուցիչներով քաղաքային տիպի համայնքի SS-ները չեն համարվել գրկված:

Չնայած ԱՖ մեթոդն ինտենսիվությունը չափում է՝ ըստ SS-ների կրած գրկանքների միջինացված պատկերի, այն չի ներկայացնում աղքատության խորությունը: Այլ կերպ ասած՝ մեթոդը հաշվի չի առնում, թե որքան կարող է լինել SS-ների հեռավորությունը յուրաքանչյուր ցուցիչի գրկանքի շեմից:

3.6.1 Դաշտային աշխատանքներ

Տվյալների հավաքագրման աշխատանքների ժամանակ առերեսվել ենք մի շարք մարտահրավերների, որոնք տվյալների որակի վրա հնարավոր ազդեցություն կարող են թողած լինել: Տավուշի սահմանամերձ համայնքներում հարցվողները հարցազրույցի ժամանակ ցուցաբերել են ցածր վստահություն և որոշ դեպքերում նաև կոպիտ վարք հարցազրուցավարների նկատմամբ: Սա կարելի է բացատրել քաղաքական իրավիճակով և

հատկապես սահմանամերձ տարածքներում լարված իրավիճակի առկայությամբ, որը պայմանավորված էր հարցազրույցների իրականացման ժամանակ սահմանների շուրջ ընթացող բանակցություններով (Avetisyan 2021):

Որոշ հարցվողներ վիրավորված են զգացել հարցման թեմայից՝ վստահ լինելով, որ աղքատության մասին հարցման մասնակցության համար իրենք չպետք է ընտրված լինեին:

Բազմաթիվ հարցվողներ դժվարացել են պատասխանել որոշ հարցերի, որոնք ենթադրում էին հաշվել այս կամ այն արտադրանքի կամ ծառայությունների համար տրամադրվող միջին ամսական ծախսը: Յետևապես, այս հարցերը ստացել են «չգիտեմ» պատասխանի բարձր ցուցանիշ:

Դժվարություն է առաջացել ամռան ընթացքում գյուղական համայնքներում իրականացնել հարցազրույցներ արական սեռի ներկայացուցիչների հետ՝ հաշվի առնելով, որ շատերը մեկնած են եղել արտագնա աշխատանքի, իսկ մյուսները ամբողջ օրը զբաղված են եղել գյուղատնտեսական աշխատանքներով, ինչի արդյունքում շատ տղամարդ հարցվողներ հասանելի չեն եղել ամբողջ օրվա ընթացքում:

4. ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալների որակն ապահովելու համար մի շարք կայունության (robustness) թեստեր են անցկացվել Ալքայրի և այլոց կողմից (Alkire et al. 2015) առաջարկված մեթոդներով: Մենք չենք ներկայացնում այս թեստերի հիմքում ընկած վիճակագրական հիմնավորումները, բայց մեկնաբանում ենք, թե ինչու են դրանք կարևոր (մանրամասների համար տե՛ս Alkire et al. (2015, էջ 234): Երկու ինդեքսի համար էլ մենք ստուգել ենք մեր ցուցանիշների ավելցուկները (redundancy), աղքատության փոփոխության նկատմամբ զգայունությունը՝ օգտագործելով գերակայության (dominance) վերլուծություն և զույգ-զույգ (pairwise) համեմատություն: Մենք եզրակացնում ենք, որ երկու ինդեքսն էլ համարժեքորեն նախագծված են, թեպետ բարելավման տեղ ունեն, մասնավորապես՝ կապված աշխատանքի չափման ցուցանիշների հետ: Մենք մեկնարկում ենք ԲԱԻ-ի կայունության արդյունքների ներկայացումից, նախքան ԿԻԻ-ի կայունության վերլուծությանն անցնելը:

4.1 ԲԱԻ

4.1.1 Ավելցուկների վերլուծություն

ԲԱԻ-ի վավերականությունն ապահովելու համար կարևոր է գնահատել առանձին ցուցանիշների որակը: Ցուցանիշները պետք է ուղղված լինեն չափելու աղքատության համապատասխան (և տարբեր) կողմերը, որոնք որպես այդպիսին ցանկացած ԲԱԻ-ի կառուցման հիմքն են (Alkire et al. 2015, էջ 197):

Որպեսզի համընկնումներ չլինեն (օրինակ՝ երկու ցուցիչ ցույց չտան աղքատության նույն կողմը²), մենք ստուգել ենք ավելցուկները: Դա անելու համար իրականացվել է Կրամերի V-ի ասոցիացիայի գործակիցների հաշվարկ յուրաքանչյուր զույգ ցուցանիշի համար: **Գծապատկեր 1**-ը ցույց է տալիս այդ գործակիցները, և եթե երկու ցուցանիշի միջև կորելացիան մեծ է³, մեկը կարող է ավելորդ լինել: Այնուամենայնիվ, կամայական երկու ցուցիչ, որոնք ունեն բարձր մակարդակի համընկնում, կարող են պահպանվել նորմատիվ պատճառներով (այսինքն՝ եթե դրանք կարևոր են քաղաքականության մշակման առանձնահատկություններով պայմանավորված կամ տարբերվում են ժամանակի ընթացքում) (Alkire et al. 2015, էջ 229):

² Սա խնդիր կլիներ, քանի որ արհեստականորեն կմեծացներ աղքատության այդ ցուցիչի կշիռը ԲԱԻ-ում:

³ Կրամերի V գործակիցն ընկնում է զրոյի և մեկի միջև, որքան գործակիցը մոտ է մեկին, այնքան մեծ է կորելացիան:

Այլ ցուցանիշներ ևս փոխկապակցված են, սակայն համընկնումը կարող է բացատրվել այս ցուցանիշի համար ընտրված սահմանման և շեմերի միջոցով: Լավ օրինակ է կրթական և առողջապահական ծառայությունների հասանելիությունը: Այս ցուցանիշներով անձը համարվում է զրկված, եթե նա գտնվում է կրթական կամ առողջապահական հաստատություններից համապատասխանաբար 30 րոպեից ավելի հեռավորության վրա: Ակնհայտ է, որ մի հաստատությունից հեռու գտնվող SS-ը հավանաբար նույնքան հեռու է մեկ այլից, քանի որ նման ծառայությունները սովորաբար տեղակայված են լինում քաղաքային բնակավայրերում:

Առավել խնդրահարույց է աշխատանքի չափականությունը կազմող երեք ցուցանիշների հարաբերակցությունը: Մենք իսկապես դժվարությամբ կարող ենք պնդել, որ այս ցուցանիշներն արտացոլում են աղքատության տարբեր կողմեր: Այս պատճառով մենք անցկացրել ենք լրացուցիչ վիճակագրական թեստ՝ չափելու ավելցուկները, ինչպես առաջարկվել է Ալքայրի և այլոց կողմից (2015, 230): Մենք փորձարկում ենք միայն այն փոփոխականները, որոնք ցույց են տվել 30%-ից բարձր հարաբերակցություն և որոնք ակնհայտորեն չեն չափում տարբեր հասկացություններ: Այսպիսով, ներառված են միայն աշխատանքային չափականության փոփոխականները: Նկատի ունեցեք, որ ստորև բերված հաշվարկները կատարված են խմբագրված ցուցիչների հարաբերակցության հիման վրա (այսինքն՝ հարցված բնակչությունը համարվել է աղքատ): Բոլոր երեք ցուցանիշների համար մենք ստանում ենք 100% միավոր: Սա նշանակում է, որ արժանապատիվ աշխատատեղից զրկվածների 100%-ը զրկված է եղել նաև աշխատանքից և աշխատաշուկայի մասնակցությունից (նկատի ունեցեք, որ կապը նույնական չէ հակառակ ուղղությամբ):

Սա խնդրահարույց է, քանի որ աշխատանքային չափականությունը հեռացնում է միաչափությունից⁴: Ավելին՝ աշխատուժի չափորոշիչից մեկ ցուցանիշով զրկված SS-ներն ավելի հավանական է, որ աղքատ համարվեն մինևնույն չափականություններում և, հետևաբար նաև, բազմաչափ աղքատ: Այնուամենայնիվ, քանի որ խնդրահարույց ցուցանիշները գտնվում են նույն չափականության մեջ, դրանք արհեստականորեն չեն մեծացնում այդ ցուցանիշների կշիռը ընդհանուր ԲԱԻ-ում. դրանց կշիռը միասին վերցված ամեն դեպքում 1/5 է (կամ 0,2):

Այս վերլուծության արդյունքները պետք է հաշվի առնվեն, սակայն դրանք չեն վտանգում ԲԱԻ-ը ինքնին: Այնուամենայնիվ, սա նշանակում է, որ աշխատանքի չափականությունը, ինչպես որ այն չափվում է, համեմատաբար միաչափ է: Հետագայում աշխատանքի չափականության ցուցիչները վերանայման կարիք ունեն:


Աղյուսակ 3. Ավելորդության չափում RO (մեթոդի համար տեսն *Alkire et al. 2015, էջեր 230-231*)

| | Աշխատաշուկայի մասնակցություն | Երկարաժամկետ գործազրկություն |
|-------------------------------------|------------------------------|------------------------------|
| Երկարաժամկետ գործազրկություն | 100% | |
| Արժանապատիվ աշխատատեղ | 100% | 100% |

⁴ Այս խնդիրը մասամբ պայմանավորված է դաշտային աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրներով: Ի սկզբանե նախատեսված էր օգտագործել չորս ցուցանիշ աշխատանքային չափականության շրջանակներում, սակայն հարցազրույցների ընթացքում կատարված հսկողության արդյունքում մեկ ցուցիչ հանվել է ԲԱԻ-ի հաշվարկից: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ցուցիչի ներքո տրվող հարցը սխալ է տրվել՝ ինչելով ոչ թե նախատեսված անհատական մակարդակում, այլ SS մակարդակում: Արդյունքում, այս չորրորդ ցուցանիշը հանվել է հաշվարկից, ինչի արդյունքում աշխատանքային չափման ներքո հայտնվել է ընդամենը երեք ցուցանիշ:


4.1.2 Գերակայության վերլուծություն

Մենք վերլուծում ենք զրկվածության միավորների զգայունությունը մարզային մակարդակում շեմի արժեքի (K) փոփոխության նկատմամբ և տարբերակում գյուղական և քաղաքային համայնքները: Մենք սկսում ենք համայնքներում զրկվածության միավորների բաշխումը՝ ստուգելու համար շեղությունը և տարբերությունները համայնքներում: [Գծապատկեր 2](#)-ը ցույց է տալիս, որ զրկանքների միավորները մոտ են նորմալ բաշխմանը բոլոր համայնքներում: Բաշխումը մի փոքր ավելի շեղված է քաղաքային համայնքներում (բացառությամբ Սպիտակի), որտեղ SS-ների ավելի մեծ մասնաբաժինն ունի զրկվածության ցածր ցուցանիշ (0-0.1):



Գծապատկեր 2. «Աղքատության ինտենսիվություն», բաշխում ըստ համայնքների

Զրկվածության միավորների կուտակային բաշխումը վերլուծելիս y առանցքը ներկայացնում է աղքատ համարվող SS-ների համամասնությունը, իսկ x առանցքը ցույց է տալիս զրկվածության ցուցանիշը: Այլ կերպ ասած [Գծապատկեր 3](#)-ում ցուցադրված կորերի ցանկացած կետ ցույց է տալիս յուրաքանչյուր համայնքում տվյալ զրկանքի համար SS-ների համամասնությունը:




Գծապատկեր 3. CDFS⁵, CCDFS⁶

Մենք նկատում ենք հստակ տարբերություն գյուղական և քաղաքային համայնքների միջև, որը համահունչ է ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀԲ-ի կողմից հաշվարկված ԲԱԻ-ին (Armstat and World Bank 2022): Թեև այս երկու խմբերի միջև տարբերությունը անհասկանալի է և տատանվում է կախված ընտրված շեմերից, հետաքրքիր տարբերակում է ի հայտ գալիս, երբ տվյալները հետազայում տարանջատում ենք: Գծապատկեր 4-ը ցույց է տալիս, որ Սպիտակը, չնայած քաղաքային համայնք լինելուն, ըստ երևույթի, ընկնում է քաղաքային և գյուղական համայնքների միջև և ավելի մոտ է վերջինիս:

⁵ Cumulative Distribution Functions

⁶ Complementary Cumulative Distribution Functions



Գծապատկեր 4. Գերակայության վերլուծություն

4.1.3 Ջույգ-զույգ համեմատություններ



Այս վերլուծությունն այնքան կայուն չէ, որ թույլ տա հուսալիորեն դասակարգել համայնքները: Համայնքների դասակարգման ավելի հստակ պատկերացում կազմելու համար մենք կատարում ենք զույգ-զույգ համեմատություններ: Այս համեմատությունները բաղկացած են յուրաքանչյուր համայնքի համար զրկածության միջին միավորի և դրանց հետ կապված վստահության միջակայքի հաշվարկից՝ աղքատության տվյալ շեմի համար:

Մենք հաշվարկել ենք զույգ-զույգ համեմատություններ մի քանի շեմերի համար և ներկայացնում ենք միայն երեք շեմ՝ .2, .33 (մեր ընտրած ԲԱԻ) և .4: Հատկապես այս շեմի ընտրության հիմնավորումը հետևյալն է. նախ, այդ արժեքները գտնվում են մեր ընտրած ԲԱԻ-ի շուրջ, և, հետևաբար, հետաքրքիր է դիտարկել, թե արդյոք զգալի տարբերություններ են առաջանում այս շեմերի միջև: Երկրորդ, գերակայության մեր վերլուծության մեջ մենք կարող ենք հետևողականորեն տարբերակել երեք խումբ՝ քաղաքային համայնքներ, Սպիտակ և գյուղական համայնքներ: Հետևաբար, զույգ-զույգ համեմատությունները թույլ են տալիս մեզ իմանալ, թե այս համայնքներից որն իսկապես կարող է դասակարգվել վստահության որոշակի մակարդակով: Ի վերջո, {0.2 : 0.4} միջակայքից դուրս շեմ ընտրելիս միավորները վիճակագրորեն չեն տարբերվում 0-ից կամ 1-ից: Հետևաբար, դրանք օգտակար չեն վերլուծության կամ քաղաքականության մշակման համար:

Գծապատկեր 5-ը ներկայացնում է մեր արդյունքների կայունության տեսողական պատկերը աղքատության սահմանաչափերի փոփոխությունների նկատմամբ: Այն ցույց է տալիս, որ քաղաքային համայնքներում բազմաչափ աղքատության դեպքերը, ընդհանուր առմամբ, չեն կարող տարբերվել միմյանցից, անկախ նրանից, թե երեք շեմերից որն է ընտրված: Սպիտակը և գյուղական համայնքները խմբավորված են որպես երկրորդ առանձին խումբ, որտեղ համայնքները չեն կարող տարբերվել միմյանցից, չնայած որ կարելի է ենթադրել, որ


Սպիտակը գտնվում է ինչ-որ տեղ քաղաքային և գյուղական համայնքների միջև՝ ելնելով **Գծապատկեր 4**-ից: Վստահության միջակայքերի հաշվարկը ցույց է տալիս, որ այն հնարավոր չէ տարբերակել գյուղական համայնքներից:

Կարևոր է, որ հնարավոր չէ միանշանակորեն դասակարգել գյուղական համայնքների (ու Սպիտակի) և քաղաքային համայնքների միջև: Իրականում, եթե դրանք դասակարգենք ստորև ներկայացված յուրաքանչյուր շեմի միջին արժեքի հիման վրա, քաղաքային համայնքների միջև բոլորովին այլ դասակարգում կստանանք: Այսպիսով, ընթերցողները պետք է ձեռնպահ մնան համայնքների վարկանիշավորումից, քանի դեռ երկու համայնքների միջև վստահության միջակայքերը չեն համընկնում:



(ա) $K = .2$

(բ) $K = .33$



(գ) $K = .4$


Գծապատկեր 5. Աղբատության դեպքերը. միջին և 95% վստահության միջակայք երեք հատույթների համար K

4.2 ԿԽԻ


4.2.1 Ավելցուկների և գերակայության վերլուծություն

Զարմանալի չէ, որ **Գծապատկեր 6 (ա)**-ն ցույց է տալիս աշխատանքի չափականության նույն հարաբերակցությունը, ինչ ԲԱԻ-ում, և մենք չենք խորանում այն խնդիրների քննարկման մեջ, որոնցում սա հանդիպում է, քանի որ արդյունքները նույնն են, ինչ ԲԱԻ-ի համար: Միակ այլ փոփոխականները, որոնք ցույց են տալիս ամուր կորելացիա (*42, առողջապահական ծառայությունների հասանելիություն և աղբի ու սանիտարական մաքրում*) ակնհայտորեն չափում են տարբեր հասկացություններ և կարող են պահվել ինչպես կան: Նրանց կորելացիան կարևոր չէ մեր ԲԱԻ-ի որակի համար և քանի որ նոր խնդրահարույց կորելացիա չի կարող հայտնաբերվել, անհրաժեշտ չէ իրականացնել ավելցուկների լրացուցիչ հաշվարկներ:

Նմանապես, գերակայության վերլուծությունը ցույց է տալիս մոտավորապես նույն արդյունքները, ինչ ԲԱԻ-ում և ԿԽԻ-ում (**Գծապատկեր 6 (բ)**): Յետևաբար, մենք չենք կրկնում վերլուծությունը, այլ վերցվում են նույն արդյունքներն ու վերապահումները (մանրամասների համար տես ԲԱԻ-ի վերլուծությունը):



(ա) Կրամերի V հարաբերակցության մատրիցա



(բ) Գերակայության վերլուծություն


Գծապատկեր 6. ԿԽԻ ամրության վերլուծություն

4.2.2 Զույգ-զույգ համեմատություններ


Մենք նաև օգտագործում ենք զույգերի համեմատություններ՝ մեր ԿԽԻ-ի մեթոդաբանությունը ստուգելու համար: Այս նպատակով դիտարկվում է նույն երեք շեմը, ինչ ԲԱԻ-ի համար: Ի տարբերություն կայունության մյուս վերլուծությունների, զույգ-զույգ համեմատությունները ԿԽԻ-ի համար մի փոքր այլ են: Բաղաքային համայնքների համար COVID-19-ի խոցելիության դեպքերը .2-ի սահմաններում դառնում են 0-ից չտարբերակվող: Ինչպես ԲԱԻ-ում, այնպես էլ շեմերի դեպքում, 0,4-ից բարձր սահմանաչափերը վիճակագրորեն չեն տարբերվում 1-ից: Յետևաբար, այս շեմերը օգտակար չեն ԿԽԻ-ը հաշվարկելու համար:

Մնացած երկու շեմերի միջև տարբերությունն ավելի քիչ խոսու՛ն է, քան ԲԱԻ-ի համար: Վարկանիշային աղյուսակը մնում է կայուն երկու շեմի միջև: Այս վարկանիշները քիչ ևորույթ են պարունակում: դրանցում պահպանված է հստակ կառուցվածք, որտեղ քաղաքային համայնքներն ավելի քիչ խոցելի են, քան գյուղականները: Այնուամենայնիվ, քաղաքային համայնքների և Սպիտակի միջև բացը ավելի քիչ է ընդգծված, քան ԲԱԻ-ում:


Հավանաբար, ավելի խիստ շեմի (.4) օգտագործումը կարող է նախընտրելի լինել, քանի որ այն թույլ է տալիս դիտել յուրաքանչյուր համայնքի ավելի փոքր մասնաբաժին, քան .33-ի շեմի դեպքում: Սա նախընտրելի է ոչ թե վիճակագրական, այլ քաղաքականության մշակման տեսանկյունից: Որքան մեծ է խոցելի բնակչությունը, այնքան ավելի դժվար է դառնում նպատակաուղղված քաղաքականություն մշակել այս խոցելիությունը հասցեագրելու համար: Սա ցույց է տալիս կայունության վերլուծության օգտակարությունը, նախքան ԲԱԻ-ը հաշվարկելը: Սա կարևոր դաս է, որը պետք է քաղել հետագա ինդեքսների կառուցման ժամանակ, որոնք հաշվարկվում են ԱՖ մեթոդով:



(ա) $K = .2$



(բ) $K = .33$



(գ) $K = .4$


Գծապատկեր 7. COVID-19-ի խոցելիության հաճախականություն. միջին և 95% վստահության միջակայք երեք շեմի համար (K)

5. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երկու ինդեքսի համար էլ արդյունքները ներկայացնում են ԲԱԻ-ի գործակիցը, յուրաքանչյուր չափականության և ցուցիչի ներդրումը (contribution) ԲԱԻ-ի վերջնական գործակցում: Ի լրումն, ութ ցուցիչ ներկայացվում է որպես մեկական օրինակ ԲԱԻ չափականությունների համար, և երեք ցուցիչ՝ ԿԽԻ-ի համար: Յուրաքանչյուր ցուցիչի համար ներկայացված չափումը հայտնի է որպես խմբագրված ցուցիչների հարաբերակցություն: Պարզ ասած՝ դա տվյալ ցուցիչով զրկված բազմաչափ աղքատ մարդկանց համամասնությունն է: Կարևորն այն է, որ սա նշանակում է, որ ոչ աղքատների զրկանքները անտեսվում են (գործընթաց, որը հայտնի է որպես խմբագրում/գրաքննում (censoring)): Բոլոր թվերի համար արդյունքները բաժանված են մարզային և համայնքային մակարդակով: Նախքան ԿԽԻ արդյունքները ներկայացնելը, մենք նախ ներկայացնում ենք ԲԱԻ-ի արդյունքները:

5.1 ԲԱԻ արդյունքներ

Երեք մարզի միջև զրկվածության մակարդակներում նշանակալի տարբերություն չկար **Գծապատկեր 8 (ա)**: Ամենաբարձր ցուցանիշը Տավուշում է՝ 17,6%, դա մի փոքր ավելին է, քան Լոռում 16% և Շիրակում 15,9%: Բոլոր երեք մարզերի համագումարը կազմել է 16,3%: Այս թվերն արտացոլում են ՀԲ-ի 2020 թվականի ազգային ԲԱԻ-ի արդյունքները երևանում (16,4%) և այլ քաղաքային համայնքներում (16,1%, Armstat 2022): Թեև երեք մարզերի միջև ԲԱԻ-ի արդյունքներում նշանակալիություն չկար, համայնքների մակարդակով, ընդհանուր զրկվածության մակարդակը սկատելիորեն ավելի բարձր է եղել գյուղական համայնքներում (**Գծապատկեր 8 (բ)**): Շիրակի, Տավուշի և Լոռիի գյուղական համայնքների ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 22,9%, 22,2% և 21,5%, մինչդեռ քաղաքային համայնքներում գրանցվել է 5,4% (քաղաքային Տավուշ) և 8,5% (Վանաձոր): Քաղաք Սպիտակը միակ բացառությունն էր, որի ցուցանիշն ուղղակիորեն գյուղական և այլ քաղաքային համայնքների միջև կազմում էր 14,7%: Գյուղական համայնքներում ավելի բարձր ցուցանիշները սերտորեն արտացոլում են ՀԲ-ի ազգային ԲԱԻ-ի արդյունքը, որը գյուղական համայնքներում ընդհանուր առմամբ կազմում է 23,2% (Armstat 2022):



Գծապատկեր 8. Մարզի մակարդակի ԲԱԻ ցուցանիշը


5.1.1 Չափականությունների և ցուցիչների ներդրումները

ԱՖ մեթոդի հետաքրքիր առանձնահատկությունը յուրաքանչյուր չափականության և ցուցիչի՝ ԲԱԻ-ում ներդրումը տարբերելու կարողությունն է: Ներդրում ասելով՝ մենք նկատի ունենք, թե որ ցուցանիշները կամ չափականություններն են ձևավորում ԲԱԻ-ի գնահատականը:


Գծապատկեր 9-ը ցույց է տալիս, որ Հյուսիսային մարզերում ԲԱԻ գնահատականի «առյուծի բաժինը» բացատրվում է աշխատանքի և հիմնարար կարիքների պակասով: Անկախ տարանջատումից, կրթությունը և առողջապահությունը այն չափականություններն են, որոնք ամենափոքր ներդրումն ունեն ԲԱԻ-ի ձևավորման մեջ: Այնուամենայնիվ, ընթերցողները պետք է զգուշավոր լինեն իրենց մեկնաբանություններում նկատի ունենալով մեր որոշ ցուցանիշների հետ կապված ավելի վաղ ներկայացված սահմանափակումները:

Մարզային մակարդակով ցուցանիշները զգալիորեն նման են. քաղաքային և գյուղական համայնքների միջև տարանջատումը, սակայն, նկատելի է: **Գծապատկեր 9 (բ)**-ը ցույց է տալիս, որ աշխատանքի և հիմնարար կարիքների չափականությունները սահմանային գործակիցների առումով ավելի քիչ կարևոր են գյուղական համայնքներում: Մյուս կողմից, գյուղական համայնքներում ապրող հարցվողներն ավելի շատ են բախվում բնակարանային պայմանների և առողջապահության հետ կապված դժվարությունների:

Հետազոտված մարզերում փողի սակավությունը, ամենայն հավանականությամբ զբաղվածության անկայուն վիճակի պատճառով, հանգեցնում է աղքատների շրջանում ահռելի դժվարությունների իրենց ամենատարրական կարիքները (առողջություն, սնունդ, հագուստ) բավարարելու հարցում:



(ա) ըստ մարզերի




(բ) ըստ համայնքների

Գծապատկեր 9. Ներդրումներն ըստ չափականությունների, 3%-ից ցածր արժեքները չեն ցուցադրվում

Տվյալները ավելի տարաբաժանելիս պատկերը հիմնականում մնում է նույնը: Ամենաշատ ներդրումն ունեցող երեք ցուցիչները աշխատանքային չափականությունից են (**Գծապատկեր 10**): Ամենաքիչ ներդրումը գրանցող երեք ցուցիչներն են գերբնակեցումը, կենտրոնացված սանիտարական պայմանները և աղբահանությունն են, ինչպես նաև պարտադիր դպրոցական ուսուցումը: Սա հատկապես վերաբերում է քաղաքային համայնքներին, թեև բոլոր համայնքներում ցուցանիշների մակարդակները մնում են 3

տոկոսից ցածր: Հատկանշական է, որ բնակարանային պայմանների չափականության երկու ցուցիչ գրանցում են ամենափոքր ներդրումը:




Գծապատկեր 10. Ներդրումները՝ ըստ ցուցիչի և համայնքի, 3%-ից ցածր արժեքները չեն ցուցադրվում

5.1.2 Արդյունքները ըստ ցուցիչների


Հիմնարար կարիքները՝ ծայրահեղ պարենային աղքատություն

Ծայրահեղ (պարենային) աղքատության ցուցիչը վերաբերում էր այն հանգամանքին, թե արդյոք մեծահասակների շրջանում սննդի սպառումը բարձր, թե ցածր է պարենային աղքատության ազգային գծից: ՏՏ-ը համարվել է զրկված, եթե չափահաս սննդի սպառումը ցածր է պարենային աղքատության գծից (մեկ անձի համար ամսական 23,763 ՀՀ դրամ): Ընդհանուր առմամբ երեք մարզերում բազմաչափ աղքատ համարվող անհատների 28%-ը ունեցել է ծայրահեղ պարենային աղքատություն (Գծապատկեր 11): Նման անձանց ամենաբարձր տոկոսը գրանցվել է Տավուշում 37,7%, Լոռիում և Շիրակում համապատասխանաբար 22,3% և 29,7%: Արտացոլելով մարզի մակարդակով Տավուշի ընդհանուր բարձր մակարդակը՝ Իջևանը (Տավուշի մայրաքաղաքը), գյուղական Տավուշը և քաղաքային Տավուշը, ի հավելումս Գյումրիի, գրանցում են ծայրահեղ պարենային աղքատության ամենաբարձր ցուցանիշները (Գծապատկեր 11 (բ)): Այս չորս համայնքները

տատանվել են քաղաքային Տավուշի 34.5%-ից մինչև Իջևանի 47%-ը: Ամենացածր ցուցանիշները գրանցվել են Շիրակի (17.3%), Վանաձորի (20.8%) և Լոռու (24.4%) գյուղերում:



(ա) ըստ մարզերի




(բ) ըստ համայնքների


Գծապատկեր 11. Խմբագրված ցուցիչների հարաբերակցությունը - Ծայրահեղ (պարենային) աղքատություն

Բնակարան՝ տաք հոսող ջուր

Տաք հոսող ջրի ցուցիչը ներկայացնում է այն ՏՏ-ները, որոնք չունեն գործող տաք հոսող ջուր: Երեք մարզերի ՏՏ-ները, որոնք հոսող տաք ջրից օգտվելու հնարավորություն չունեն, 38.6% է (Գծապատկեր 12 (ա)): Զրկվածության ամենաբարձր ցուցանիշը Տավուշում է՝ 53.7%, որին հաջորդում են Լոռին՝ 42.9% և Շիրակը՝ 25%: Տաք ջրի հասանելիության հետ կապված զրկանքների ցուցանիշները շատ տարբեր են եղել ութ համայնքներում (Գծապատկեր 12 (բ)): Ամենաբարձր ցուցանիշը Տավուշում է՝ 63.6%, որին հաջորդում են գյուղական Լոռին (54.8%), Իջևանը (52.7%) և Սպիտակը (50.9%): Ամենացածր ցուցանիշը Գյումրիում է՝ 16%, որին հաջորդում են քաղաքային Տավուշը (27%), Վանաձորը (30.1%) և գյուղական Շիրակը (38.3%):



(ա) ըստ մարզերի




(բ) ըստ համայնքների


Գծապատկեր 12. Խմբագրված ցուցիչների հարաբերակցությունը - Տաք հոսող ջուր

Կրթություն. կրթական ծառայությունների որակ

Այս ցուցանիշը բացահայտել է այն SS-ները, որոնք բավարարված չեն կրթական ծառայությունների որակով: Երեք մարզերից յուրաքանչյուրում գրկվածության ընդհանուր մակարդակը կազմել է ընդամենը 7%, և այս ցուցանիշի պարագայում մարզերի միջև էական տարբերություն չի նկատվել (6.3% Լոռիում, 8.3% Տավուշում և 7.2% Շիրակում) (Գծապատկեր 13 (ա)): Համայնքի մակարդակով այս ցուցանիշով ամենաբարձր գրկվածությունն ունեցել է Իջևանը՝ 9.3%, որին հաջորդում են գյուղական Շիրակը (8.4%) և Վանաձորը (8.4%) (Գծապատկեր 13 (բ)): Ամենացածր ցուցանիշը Լոռիում է՝ 4%, որին հաջորդում է Սպիտակը՝ 5,8%:



(ա) ըստ մարզերի




(բ) ըստ համայնքների


Գծապատկեր 13. Խմբագրված ցուցիչների հարաբերակցությունը - կրթական ծառայությունների որակ

Աշխատանք. երկարաժամկետ գործազրկություն

Երկարաժամկետ գործազրկության ցուցիչում SS-ը համարվում էր զրկանք ունեցող, եթե աշխատունակ տարիքի անդամներից որևէ մեկը մեկ և ավելի տարի գործազուրկ է եղել և ակտիվորեն աշխատանք է փնտրում: Զրկված չեն համարվել այն SS-ները, որոնք աշխատանքային տարիքի անդամներ չեն ունեցել: Այս ցուցանիշի համաձայն՝ երեք մարզերում ընդհանուր առմամբ զրկվածության մակարդակը կազմել է 39.6% (Գծապատկեր 14 (ա)): Ամենաբարձր ցուցանիշը Շիրակում է՝ 42%, որին հաջորդում են Լոռին՝ 38,9% և Տավուշը՝ 36,5%: Ութ համայնքներից բոլոր երեք գյուղականներում և Սպիտակում ութ համայնքների մեջ ունեցել են անապահովության ամենաբարձր ցուցանիշները (Գծապատկեր 14 (բ)): Ամենաբարձր ցուցանիշը Շիրակում է՝ 59,4%, որին հաջորդում են Լոռին (45,8%), Տավուշը (41,5%) և Սպիտակը (40,8%): Ամենացածր ցուցանիշը գրանցվել է Իջևանում և քաղաքային Տավուշում համապատասխանաբար 28.1% և 28.5%:



(ա) ըստ մարզերի




(բ) ըստ համայնքների


Գծապատկեր 14. Խմբագրված ցուցիչների հարաբերակցությունը - Երկարաժամկետ գործազրկություն

Առողջություն - Առողջապահական ծառայությունների որակ

Այս ցուցիչը չափում էր այն SS-ները, որոնք բավարարված չէին առողջապահական ծառայությունների որակով: Այս ցուցիչի համաձայն՝ երեք մարզերում ընդհանուր զրկվածության մակարդակը կազմել է 15.4% (Գծապատկեր 15 (ա)): Ամենաբարձր ցուցանիշը Լոռիում է՝ 17.6%, որին հաջորդում են Շիրակը՝ 14.5% և Տավուշը՝ 12.1%: Համայնքի մակարդակով Վանաձորն ուներ զրկվածության ամենաբարձր ցուցանիշը՝ 22.6%, որին հաջորդում է Գյումրին՝ 17.2% (Գծապատկեր 15 (բ)): Ամենացածր ցուցանիշն ունեցել է Տավուշը՝ 10%, որին հաջորդում է գյուղական Շիրակը՝ 10.5%:



(ա) ըստ մարզերի




(բ) ըստ համայնքների

Գծապատկեր 15. Խմբագրված ցուցիչների հարաբերակցությունը - Առողջապահական ծառայությունների որակ


5.2 ԿԻՒ արդյունքներ

Այս գլուխը սկսվում է ԿԻՒ-ի ընդհանուր արդյունքների ակնարկով, որին հաջորդում են համացանցի հասանելիության, բազմասերունդ SS-ների և տարիքի ցուցիչների արդյունքները: Մենք մանրամասնում ենք ԿԻՒ ցուցանիշները բոլոր մարզերում և բաժանում ենք յուրաքանչյուր չափականության և ցուցիչի ներդրումն այս ինդեքսում:

Երեք մարզերն ունեցել են COVID-19-ի խոցելիության համանման ցուցանիշներ (**Գծապատկեր 16 (ա)**): Ամենաբարձր ցուցանիշն ունեցել է Տավուշը՝ 20,4%, որին հաջորդում են Լոռին՝ 20,1% և Շիրակը՝ 18,8%: Ընդհանուր ԿԻՒ-ի ընդհանուր ցուցանիշը երեք մարզերից յուրաքանչյուրում կազմել է 19,7%: Համայնքի մակարդակում COVID-19-ի խոցելիության մակարդակի կտրուկ տարբերություններ կային (**Գծապատկեր 16 (բ)**): Գյուղական համայնքները զգալիորեն ավելի խոցելի էին, քան քաղաքները: Գյուղական Շիրակի, Լոռու և Տավուշի գյուղական համայնքների ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 30,5%, 29,8% և 26,8%, մինչդեռ քաղաքային համայնքները շատ ավելի ցածր ցուցանիշներ ունեն՝ 7,5% (Իջևան) և 15,3% (Սպիտակ):



(ա) ըստ մարզերի




(բ) ըստ համայնքների


Գծապատկեր 16. ԿԻՒ ցուցանիշները

5.2.1 Չափականությունների և ցուցիչների ներդրումները

SS կազմը ամենաքիչն է պայմանավորել COVID-19-ի խոցելիությունը մարզային մակարդակում, և առանց մեծ տարբերությունների՝ համայնքային մակարդակում: Մյուս երեք չափականությունները հավասարապես նպաստել են ԿԻՒ-ի գնահատականներին՝ յուրաքանչյուրի մեկ երրորդից մի փոքր պակաս (**Գծապատկեր 17 (ա)**): Համայնքի մակարդակով միայն Գյումրին և Իջևանն են ավելի քիչ տուժել կենցաղային ծառայությունների չափականությունում (**Գծապատկեր 17 (բ)**): Մյուս համայնքները քիչթեշտատ հետևել են մարզի մակարդակով դիտարկվող տենդենցներին:




(ա) ըստ մարզերի



(բ) ըստ համայնքների

Գծապատկեր 17. Ներդրումներն՝ ըստ չափականությունների, 3%-ից ցածր արժեքները չեն ցուցադրվում

Ցուցիչների ներդրումների վերլուծությունը թույլ է տալիս մի քանի հետաքրքիր դիտարկումներ անել: Գյուղական-քաղաքային բաժանումը կրկին ի հայտ է գալիս որոշ չափով: Օրինակ, Տավուշի և Շիրակի գյուղական համայնքները միակն էին, որտեղ հարցվածների ավելի քան 3 տոկոսը չունեն կենտրոնացված ջրամատակարարման համակարգ, ընդ որում Լոռին այստեղ զիջում է (Գծապատկեր 18): Կարևոր է նաև նշել, որ Սպիտակի ԿԽԻ-ի միավորները հիմնականում համընկնում են այլ քաղաքային համայնքների հետ, ի տարբերություն ԲԱԻ-ի:




Գծապատկեր 18. Ներդրումներն՝ ըստ ցուցիչի և համայնքի, 3%-ից ցածր արժեքները չեն ցուցադրվում


5.2.2 Արդյունքները ըստ ցուցիչների

Տարիք

SS-ները համարվել են խոցելի, եթե ընտանիքի անդամներից որևէ մեկը 60 տարեկան և ավելի բարձր տարիքի էր: Գծապատկեր 19 (ա)-ի այս ցուցանիշով մարզերի միջև խոցելիության մակարդակի էական տարբերություն չկար: Ամենաբարձր ցուցանիշը Լոռիում է՝ 62,5%, որին հաջորդում են Շիրակը (58,9%) և Տավուշը (58,2%): Ընդհանուր ցուցանիշը երեք մարզերում կազմել է 60,3%: Համայնքների միջև խոցելիության մակարդակներում նույնպես մեծ տարբերություն չկար (Գծապատկեր 19 (բ)): Գրեթե բոլորը եղել են 60,1%-ի (Սպիտակ) և 63,4%-ի (Գյումրի) միջակայքում, բացառությամբ Իջևանի՝ 46,5%-ի և գյուղական Շիրակի 52,3%-ի:



(ա) ըստ մարզերի




(բ) ըստ համայնքների


Գծապատկեր 19. Խմբագրված ցուցիչների հարաբերակցությունը - Տարիք

Չամացանցի հասանելիություն

Չամացանցային ծառայություն տրամադրող ընկերություններից ինտերնետ կապ չունեցող ՏՏ-ները համարվել են զրկված: Բջջային հեռախոսի ծառայություններ մատուցողները չեն համարվել կենցաղային ծառայություններ մատուցողներ: Ընդհանուր առմամբ երեք մարզերում խոցելիության մակարդակը կազմել է 33.6% (Գծապատկեր 20 (ա)): Ամենաբարձր ցուցանիշը Լոռիում է՝ 40.5%, որին հաջորդում են Տավուշը՝ 35.5% և Շիրակը՝ 24.1%: Չամայնքի մակարդակով համացանցի հասանելիության ցուցիչով խոցելիության ամենաբարձր ցուցանիշն ունեցել է Լոռին՝ 40.8%, որին հաջորդում են Վանաձորը (40.8%) և Տավուշը (39.2%) (Գծապատկեր 20 (բ)): Ամենացածր ցուցանիշն ունեցել է Գյումրին՝ 23.3%, որին հաջորդում են գյուղական Շիրակը (25.1%) և Իջևանը (27.7%):



(ա) ըստ մարզերի




(բ) ըստ համայնքների


Գծապատկեր 20. Խմբագրված ցուցիչների հարաբերակցությունը - Չամացանցի հասանելիություն

Բազմասերունդ տնային տնտեսություն

SS-ները համարվել են բազմասերունդ և խոցելի, եթե դրանցում եղել են և՛ երեխաներ (0-15 տարեկան), և՛ տարեցներ (65+ տարեկան): Ընդհանուր առմամբ, երեք մարդերում խոցելիության մակարդակը կազմել է 6.7% (Գծապատկեր 21 (ա)): Ամենաբարձր ցուցանիշը եղել է Շիրակում 8.4%, որին հաջորդում են Լոռին՝ 6%, Տավուշը՝ 5%: Համայնքի մակարդակով ամենաբարձր ցուցանիշներն ունեցել են Շիրակի և Լոռու գյուղական համայնքները՝ համապատասխանաբար 10.3% և 8.8%, որին հաջորդում են Սպիտակը (7.6%) և Գյումրին (7.1%) (Գծապատկեր 21 (բ)): Ամենացածր ցուցանիշն ունեցել են Վանաձորը և Իջևանը՝ համապատասխանաբար 3.1% և 4.1%:



(ա) ըստ մարզերի



(բ) ըստ համայնքների

Գծապատկեր 21. Խմբագրված ցուցիչների հարաբերակցությունը – Բազմասերունդ SS

6. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Նախքան հանրային քաղաքականության բացերում խորանալը, ցանկալի է նշել, որ սույն գեկույցի նպատակը ուսումնասիրված երեք մարզերում աղքատության պատճառահետևանքային մեխանիզմը ներկայացնելը չէ: Մենք չենք պնդում, որ բարելավված կրթությունն ավելի քիչ կարևոր է, քան բնակարանային կամ աշխատանքային պայմանների բարելավումը: Դա անելու համար ավելի խորը հետազոտության կարիք կլինի: Այս բաժինը պարզապես ձգտում է ուրվագծել, թե որտեղ կարող են կենտրոնացվել աղքատության դեմ պայքարի ամենաարդյունավետ ջանքերը:

Թեև սա կարող է զարմանալի չլինել, մեր արդյունքները ցույց են տալիս, որ աղքատությունը տարբեր կերպ է դրսևորվում գյուղական և քաղաքային համայնքներում: Եթե այս տարբերություններն ավելի ճշգրիտ կերպով ընդգծելու համար ավելի խորքային հետազոտություն է պահանջվում, ապա գյուղական և քաղաքային համայնքների միջև տարբերակված մոտեցումները հնարավոր է որոշակիորեն դուրսբերել:

Այսպես ասած, մենք ներկայացնում ենք քաղաքականության բացերը, իսկ ավելի ճիշտ՝ ուղղություններ, որոնցում կարող են պահանջվել ավելի շատ ռազմավարական քաղաքական միջամտություններ՝ հիմնվելով բացառապես այն հիմնական արդյունքների վրա, որոնք բխել են մեր տվյալներից:

6.1 Թիրախը՝ աղքատություն. հնարավոր քաղաքականություններ

Յուրաքանչյուր համայնք էականորեն զրկված է եղել արժանապատիվ կյանքի ցուցանիշից՝ մոտ երկու երրորդով և ավելիով, երեք մարզերում ընդհանուր 69.3%: Այս ցուցանիշը հիմնականում ազդել է SS-ների՝ կենցաղային հիմնական ծախսերը վճարելու կարողության վրա, և ի թիվս մի շարք հարցերի, հետազոտության արդյունքները բացահայտեցին SS-ների առողջ պարենի կայուն հասանելիության զգալի խնդիրներ: Այս խնդրի լուծման համար հանրային քաղաքականություն մշակելու կարիք կա:

Հիմնարար կարիքներ

Հիմնարար կարիքները հոգալու՝ բնակիչների դժվարությունները համատարած են: Հարցվածների 60,6-ից 68,3 տոկոսը դժվարացել է վճարել իրենց ամսական ծախսերը, իսկ ոմանք դժվարություններ են ունեցել համապատասխան կոշիկ ձեռք բերելու հարցում: Յուրաքանչյուր համայնքի բնակիչների ավելի քան 80%-ը չի կարող իրեն մեկշաբաթյա արձակուրդ թույլ տալ՝ ներառյալ հարազատների կամ ընկերների հետ մնալը: Նորարարական քաղաքականություններ պետք է մշակել՝ աղքատության ամենահրատապ դրսևորումները կանխելու համար: Հետազոտությունն ու հանրային քաղաքականությունը պետք է նաև ուղղված լինեն ավելի լավ հասկանալուն, թե որ գրկանքներն են միայն ախտանշաններ, և որ գրկանքներն են ակտիվորեն արգելում բնակչությանն ավելի բարեկեցիկ կյանք վարել:

Չնայած այս խնդիրներին, բնակչության մեծ մասը գրանցված չէ աղքատության նպաստի համակարգում: Կարևոր է հասկանալ սրա պատճառները և հնարավոր արդյունավետ լուծումները: Նպատակ, որն արդեն հասցեագրվում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող մեկ այլ ծրագրի՝ «Ամուր տեղական գործընկերություն և կարող ԶԻԿ-ներ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների» ծրագրով (EU for Armenia 2022):

Բնակարանային պայմաններ

Առողջ ջեռուցումն ու որակյալ ջրի հասանելիությունը բնակարանային ապահովության հետ կապված ամենաէական խնդիրներից են, որոնց պետք է առաջնահերթություն տրվի երեք մարզերից յուրաքանչյուրում: Առողջ ջեռուցումը գրանցել է առանձնապես բարձր զրկվածության ցուցանիշներ: Կարևոր է ավելի լավ հասկանալ, թե արդյոք այդ զրկանքները պայմանավորված են տնտեսական խոչընդոտներով և/կամ ոչ պատշաճ տրամադրվող հանրային ծառայություններով: Նշանակալի խնդիրներ են արձանագրվել նաև հանրային այնպիսի ծառայությունների հետ կապված, ինչպիսին է աղբահանությունը:

Կրթություն

Կրթության չափման ցուցանիշները ԲԱԻ-ի բոլոր ցուցիչներում գրանցել են զրկվածության ամենացածր ցուցանիշները: Այնուամենայնիվ, ընթերցողները պետք է չչտապեն թերագնահատել այս խնդրին անդրադառնալու կարևորությունը, քանի որ այն կարող է խորը ազդեցություն ունենալ աղքատության այլ ասպեկտների վրա:

Առողջություն

Նույն մոտեցումը կարող է նպատակահարմար լինել նաև առողջապահական խնդիրների մասով, որտեղ զրկվածության մակարդակը համեմատաբար ցածր է: Այնուամենայնիվ, SS-ների հիմնական խնդիրների մասին հարցի դեպքում «առողջապահական խնդիրները լուծելու անկարողությունը» ութ համայնքներից յուրաքանչյուր հինգում ամենագլխավոր պատասխանն է եղել՝ յուրաքանչյուրում հարցվածների մոտավորապես մեկ երրորդից մինչև կեսի շրջանում: Հատկանշական է, որ սա նաև ճնշող մեծամասնությամբ ամենամեծ խնդիրն է 65 տարեկանից բարձր հարցվածների համար: Իջևանի, Շիրակի և Սպիտակի գյուղական SS-ների հիմնական խնդիրները եղել են «բնակարանային խնդիրները» (համապատասխանաբար 38.1%, 31.4% և 42.3%): Շիրակի և Լոռիի գյուղերը գրանցել են ամենաբարձր ցուցանիշները, որոնք նույնիսկ ամենօրյա սննդի համար բավարար գումար չունեն (համապատասխանաբար 15% և 14.1%): Սա մատնանշում է ցուցիչի տարածվածության և ազդեցության կարևորությունը:

Աշխատանք

Աշխատանքը գերակշռող խնդիր է երեք մարզերից յուրաքանչյուրում, որտեղ յուրաքանչյուր համայնքում զրկվածության զգալի ցուցանիշներ կան: Այս ուսումնասիրությունը թույլ չի տալիս բացահայտել նման զրկանքների պատճառները: Այդուհանդերձ, հաշվի առնելով այս խնդրից տուժած բնակչության մեծ մասը՝ աղքատության դեմ պայքարում այս հարցը արժանի է հատուկ ուշադրության: Սա հատկապես հատկանշական է, քանի որ զբաղվածությունը, ամենայն հավանականությամբ, ազդում է աղքատության այլ չափականությունների վրա ևս:

6.2 Նպատակադրման բարելավում. ավելի լավ հետազոտելով աղքատությունը

Այս վերլուծությունը վկայում է ԲԱԻ-ի մեթոդաբանության զգալի թուլությունների մասին: Քանի որ այն մեծապես հիմնված է Տևային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության մեթոդաբանության վրա, Հայաստանում բազմաչափ աղքատության ուսումնասիրության համար ցուցիչներից որոշների արդիականությունը կասկած է հարուցում: Այսպիսով, պետք է իրականացվի ցուցիչների, դրանց սահմանման և դրանց շեմերի որոշարկման մանրակրկիտ վերանայում՝ հուսալիությունն ու վավերականությունը բարելավելու համար:

Այս խնդիրներից մի քանիսն ակնհայտ են դարձել կայունության վերլուծության միջոցով: Սա ցույց է տալիս կանոնավոր հիմունքներով այս տեսակի վերլուծությունների իրականացման կարևորությունը՝ կիրառվող մեթոդաբանությունները բարելավելու համար: Թեև մեթոդաբանության փոփոխությունն ժամանակի ընթացքում ազդում է աղքատության միջազգային հետազոտությունների հետ արդյունքների համեմատելիության վրա, կարևոր է բարելավել Հայաստանում աղքատության մասին մեր պատկերացումները: Իր հերթին դա թույլ կտա ավելի լավ քաղաքականություն և ավելի լավ առաջարկներ մշակել:

Այս ուսումնասիրությունը ցույց է տվել նաև համայնքային մակարդակով աղքատության ուսումնասիրության անհրաժեշտությունը: Թեև քաղաքային-գյուղական բաժանումը հիմնականում համապատասխանում է իրականությանը, այն չի կարող արձանագրել Հայաստանում աղքատության փորձի կարևոր տարբերությունները: Այս մոտեցումը անտեսում է ներտնային խնդիրները և ընտանիքի անդամների միջև առկա զրկանքների տարբերությունները: Օրինակ, SS ներսում գենդերային անհավասարության հետ կապված կարող են էական խնդիրներ լինել սակայն դա ներառված չէ ԲԱԻ-ի հաշվարկում: Սա որոշ չափով մեղմվում է այն ենթադրությամբ, որ զրկանքներն ունեն արտաքին ներգործություն (դրական կամ բացասական), բայց արդյունքները մեկնաբանելիս այնուամենայնիվ պետք է զգուշավոր գտնվել: Հետևաբար, սեռի, տարիքի և այլ չափանիշների անհավասարակշռությունները բացահայտելու համար լրացուցիչ հետազոտության կարիք կա:

Վերջապես, կարևոր է նշել, որ ԲԱԻ-ի չափականությունները օգտակար են, բայց, այսպես ասած, «արծաթե փամփուշտ» չեն: Աղքատության հիմքում ընկած պատճառահետևանքային կապերը բացահայտելու համար անհրաժեշտ է լրացուցիչ հետազոտություն՝ խնդիր, որը միմիայն ԲԱԻ-ի միջոցով հնարավոր չէ իրականացնել: Ինչպես նշեցինք, խնդրի քիչ տարածվածությունը դեռ չի նշանակում, որ այն չունի հեռավար հետևանքներ:

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս ուսումնասիրությունը նպատակ ուներ ստեղծելու երկու ինդեքս, որոնք ուսումնասիրում են բազմաչափ աղքատությունը և COVID-19-ի խոցելիությունը Հայաստանի հյուսիսային երեք մարզերում՝ Լոռիում, Շիրակում և Տավուշում: Թվով 2406 ՏՏ-ների շրջանում անցկացված հարցման արդյունքում ստացված տվյալներն օգտագործվել են բազմաչափ աղքատության ինդեքս (MPI/ԲԱԻ) և COVID-19 խոցելիության ինդեքս (CVI/ԿԻԻ) ստեղծելու համար՝ օգտագործելով ԱՖ մեթոդը: ԲԱԻ-ը ներառում էր բազմաչափ աղքատության հինգ չափականություն՝ (1) հիմնարար կարիքներ, (2) բնակարանային պայմաններ, (3) կրթություն, (4) աշխատանք և (5) առողջապահություն: Այս չափականություններն ընդհանուր առմամբ կազմված էին 24 ցուցիչներից, որոնք մատնանշում էին դրանցից յուրաքանչյուրում զրկվածության մակարդակը: ԿԻԻ-ը ներառում էր չորս չափականություն՝ (1) աշխատանք, (2) կենցաղային ծառայություններ, (3) տնային տնտեսությունների կազմ և (4) առողջապահություն: Այս չափականությունները կազմված էին ընդհանուր առմամբ 12 ցուցիչներից:

Ի տարբերություն Հայաստանում մշակված նախորդ ԲԱԻ-ների, այս ուսումնասիրությունն իրականացվել է համայնքային մակարդակում՝ աղքատության յուրահատուկ դրսևորումների վերաբերյալ առավել երանգավորված հայացք մշակելու նպատակով: Առաջ շարժվելով՝ կարևոր է գիտակցել Հայաստանի համար ենթազգային խոցելիության ինդեքսներ մշակելու կարևորությունը: Սեզմենտավորելով ԲԱԻ-ի տվյալները ըստ համայնքների՝ այս հետազոտությունը կարողացավ բացահայտել յուրաքանչյուր համայնքում նկատվող կոնկրետ զրկանքները: Բացի այն, որ բոլոր համայնքները ազդեցություն էին կրում աշխատաշուկայի հասանելիության և կայուն մուցման ընդհանուր զրկանքներից, բացահայտվեցին մի քանի այլ օրինաչափություններ ևս: Հայաստանում անցկացված նախորդ հետազոտություններում դիտարկված քաղաք-գյուղ բաժանումը ևս մեկ անգամ երևաց արդեն մեր ուսումնասիրության մեջ: Աշխատանքի և հիմնարար կարիքների չափականություններն պակաս ակնառու էին գյուղական համայնքներում, մինչդեռ վերջիններում բնակվող հարցվողներն ավելի շատ դժվարություններ են գրանցում բնակարանային պայմանների և առողջապահության հետ կապված, քան քաղաքային հարցվողները: Հավելյալ բացահայտում է այն, որ քաղաք Սպիտակում գրանցված զրկվածության մակարդակը առավել բնորոշ է գյուղական, այլ ոչ թե քաղաքային համայնքներում դրսևորվող ցուցանիշներին: Նմանատիպ ցուցանիշ նկատվեց նաև ԿԻԻ-ի շրջանակներում: Այստեղ, սակայն, Սպիտակը մյուս համայնքներից առանձնապես չտարբերվեց՝ հուշելով, որ գրանցված տարբերությունները հավանաբար պայմանավորված են ցուցանիշների որոշակի ենթախմբով: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս այնպիսի ուսումնասիրությունների օգտակարությունը, որոնք կիրականացվեն նաև քաղաքային-գյուղական տարանջատումից անդին:

Ի վերջո, այս ուսումնասիրությունը նախանշեց մի շարք խնդիրներ, որոնք պետք է հասցեագրվեն Հայաստանում աղքատության վերաբերյալ հետագա հետազոտություններում: Մասնավորապես, բազմաչափ աղքատության հետազոտման մեթոդաբանությունների վերանայումը կարող է օգտակար լինել աղքատության մասին ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու համար: Մեկ այլ բացահայտում բխում է այս ուսումնասիրության շրջանակներում ստեղծված COVID-19-ի խոցելիության ինդեքսից: Ուսումնասիրությունը ցույց տվեց նման մեթոդաբանությունների օգտակարությունը՝ նմանատիպ խնդիրներ ուսումնասիրելու համար, ինչպիսիք են կլիմայի փոփոխության կամ տեղահանման նկատմամբ խոցելիությունը:

Այս հետազոտությունից և հետագայում իրականացվելիք այլ աղքատության բազմաչափ ուսումնասիրություններից հավաքագրված տվյալները կարող են նպաստել աղքատության նվազեցման քաղաքականությանը և գործողություններին, որոնք կարող են տեղայնացվել առանձին համայնքներում գրկանքների յուրահատուկ դրսևորումներին: Ամեն համայնքի յուրահատուկ համատեքստը կարող է վերլուծվել՝ բացահայտված համապատասխան խնդիրները հասցեագրելու նպատակով: Որպես «Համայնքային աղքատության հաղթահարում. կիրառական մոտեցումներ» ծրագրի նախնական տեղեկատվական հետազոտական փուլ, այս հետազոտության արդյունքները կօգտագործվեն տեղական ՔՀԿ-ների, ՏԻՄ-երի և համայնքի այլ անդամների միջև հետագա համատեղ ջանքերի ուղղությամբ՝ Լոռիում, Ծիրակում և Տավուշում բազմաչափ աղքատության և խոցելիության դեմ պայքարելու համար: Դիտարկելով աղքատության բազմաչափ ուսումնասիրումը որպես տեղեկատվական մեկնարկային կետ՝ այս հետազոտությունը և հետագայում համայնքային մակարդակով աղքատության բազմաչափ հետազոտությունները կարող են հիմք դառնալ Հայաստանում աղքատության նվազեցմանն ուղղված ցանկացած ջանքերի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Alkire, Sabina, and James Foster. 2011. "Counting and Measurement." *Journal of Public Economics* 95 (7): 476–87. <https://doi.org/10.1016/j.jpubeco.2010.11.006>.

Alkire, Sabina, James E. (James Eric) Foster, Suman Seth, Maria Emma Santos, José Manuel Roche, and Paola Ballón. 2015. *Multidimensional Poverty Measurement and Analysis*. First. Book, Whole. New York, NY: Oxford University Press. <https://doi.org/10.1093/acprof:oso/9780199689491.001.0001>.

Alkire, Sabina, Usha Kanagaratnam, and Anandina Suppa. 2022. "Note on the Global Multidimensional Poverty Index (MPI) 2022 Changes over Time Results for 84 Countries." https://www.ophi.org.uk/wp-content/uploads/OPHI_MPI_MN_54_2022.pdf.

Alkire, Sabina, and Maria Emma Santos. 2010. "Multidimensional Poverty." In *Handbook of Income Distribution*, edited by Armstat. 2020. "Household's Integrated Living Conditions Database (by Household)." <https://armstat.am/en/?nid=205>.

Armstat, and World Bank. 2019. "SOCIAL SNAPSHOT AND POLICY AND STATISTICAL AND ANALYTICAL REPORT." Yerevan. https://armstat.am/file/article/poverty_2019_english_2.pdf.

—. 2022. "SOCIAL SNAPSHOT AND POLICY AND STATISTICAL AND ANALYTICAL REPORT." https://armstat.am/file/article/poverty_2019_english_2.pdf.

Avetisyan, Ani. 2021. "Russian Troops Deployed to Armenia's Tavush Province." *OC Media* August. <https://oc-media.org/russian-troops-deployed-to-armenias-tavush-province/>.

EU for Armenia. 2022. "Partnerships for Accountable Communities and Inclusive Social Protection." <https://eu4armenia.eu/project-projects/>.

Santos, Maria Emma, and Sabina Alkire. 2011. "Training Material for the Human Development Reports: The Multidimensional Poverty Index." *Human Development Reports*.

Statistics South Africa. 2020. "Mapping Vulnerability." <https://www.statssa.gov.za/?p=13875>.

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հասարակական կարծիքի ուսումնասիրության տվյալները ստացվել են Հայաստանի երեք՝ Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում ներկայացուցչական հետազոտության միջոցով՝ իրականացնելով համակարգչային ծրագրի միջոցով անհատական դեմ առ դեմ հարցազրույցեր, ինչը միտված էր հնարավորինս ճշգրիտ տեղեկատվություն ստանալ Հայաստանում բազմաչափ աղքատության և դրա պատճառների մասին:

Հարցման տեխնիկական ակնարկ

| Հարցման վերաբերյալ փաստեր | Տվյալներ | Նշումներ |
|--|--|--------------------------|
| Դաշտային աշխատանքն իրականացնող կազմակերպություն | ՀՌԿԿ Հայաստան Հիմնադրամ | |
| Դաշտային աշխատանքի ժամկետը | 29 Հունիսի 2021 - 23 Օգոստոսի 2021 | |
| Ընտրանքի մեթոդաբանությունը | ՀՀ ընտրական տեղամասերի ցանկ | |
| Ընտրանքի չափը | n = 2,406 | |
| Թիրախային բնակչությունը | ՀՀ քաղաքացիներ | |
| Ընդհանուր թիրախային բնակչությունը | 426,930 (18+ տարիքային խումբ) | |
| Հարցման ձևը | Տարածաշրջանային | |
| Նմուշառման մեթոդը | Stratified randomized cluster sample | |
| Սխալի թույլատրելի շեղում | +/- 2% | 95% վստահության միջակայք |
| Հարցազրույցի իրականացման մեթոդը | Անհատական դեմ առ դեմ հարցազրույց՝ համակարգչային ծրագրի միջոցով . | |
| Հաջողված պատասխանողների տոկոսը | 34% | |
| Հարցազրույցի լեզուն | Հայերեն | |
| Կշռի գործակիցը | Հաշվարկված են անհատական և տնային տնտեսությունների մակարդակի կշիռները | |

Ընտրանքի մեթոդաբանությունը

Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի 2406 բնակիչների ներկայացուցչական ընտրանքը ստացվել է տնային տնտեսությունների (SS) այցելությունների միջոցով: Ընտրության առաջին փուլի ընթացքում ընտրական տեղամասերը (առաջնային ընտրանքի միավորներ - ԱԸՄ) ընտրվել են պատահականորեն՝ յուրաքանչյուր ենթաշերտում գրանցված ընտրողների թվին համաչափ հավանականությամբ: Երկրորդ փուլի ընթացքում տնային տնտեսություններն (երկրորդային ընտրանքի միավորներ) ընտրվել են «պատահական քայլի» միջոցով: Երրորդ փուլում ընտրվել են հարցվողները (վերջնական ընտրանքի միավորներ)՝ ելնելով վերջին ծննդյան տարեդարձից: Հարցվածների բաշխվածությունը տվյալ ժողովրդագրական

խմբերում ըստ կոնկրետ մարզերի քաղաքացիների⁷ ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

Գեղերային բաշխում (կանխատեսված ընդդեմ իրական ընտրանքի)

| Սեռ | Չարցման բաշխումը | Կանխատեսելի բաշխում |
|----------------|------------------|---------------------|
| Տղամարդ | 33% | 44% |
| Կին | 67% | 56% |

Տարիքային բաշխում (կանխատեսված ընտրանքն ընդդեմ իրականի)

| Տարիք | Չարցման բաշխումը | Կանխատեսելի բաշխում |
|-------|------------------|---------------------|
| 18-35 | 25% | 34% |
| 36-55 | 29% | 32% |
| 56+ | 46% | 33% |

Բնակավայր (կանխատեսված ընտրանքն ընդդեմ իրականի)

| Settlement տեսակը | Չարցման բաշխումը | Կանխատեսելի բաշխում |
|-------------------|------------------|---------------------|
| Քաղաքային | 57% | 55% |
| Գյուղական | 43% | 45% |

Մարզի բաշխվածությունը (կանխատեսված ընտրանքն ընդդեմ իրականի)

| Մարզ | Չարցման բաշխումը | Կանխատեսելի բաշխում |
|---------------|------------------|---------------------|
| Շիրակ | 33% | - |
| Լոռի | 33% | - |
| Տավուշ | 33% | - |

⁷ Բնակչության փաստացի բաշխվածությունը ժողովրդագրական խմբերի վրա հիմնված է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների վրա՝ 2021 թվականի հունվարի դրությամբ և հաշվարկվում է գիտականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ: Այնուամենայնիվ, 2011 թվականի մարդահամարից հետո Չայաստանի փաստացի բնակչության վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն չկա:

Կշռում

Տվյալները կշռվել են՝ ապահովելու երեք մարզերի բնակչության ներկայացվածությունը և տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ չպատասխանելու պատճառով ժողովրդագրական խեղաթյուրումները շտկելու համար: Տվյալները պարունակում են կշիռների երկու խումբ:

- ◁ Անհատական կշիռ: Հետազոտավորման կշիռներն ըստ մարզերի, բնակավայրերի տեսակի (քաղաք/գյուղ), սեռի և տարիքի (18-35, 36-55, 56-64) կիրառվել են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից տրամադրված վերջին տվյալների հիման վրա (2021 թվականի հունվարի դրությամբ):
- ◁ Տնային տնտեսության կշիռ: Քաշը հաշվարկվել է ըստ մարզի, բնակավայրի տեսակի (քաղաք/գյուղ) և տնային տնտեսության չափի՝ 3 մարզերում SS-ների թվի ճշգրտման համար: Ուղղման հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից տրամադրված կենսապայմանների միասնական հետազոտության վերջին ակիբը (2018թ):

Հարցաշար

Հայերեն և անգլերեն հարցաշարի նախագիծը մշակվել է ՀՌԿԿ-Հայաստանի թիմի կողմից և օգտագործվել է բազմաչափ աղքատության վերաբերյալ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաշարի շուրջ 90%-ը: Հայերեն հարցաշարը վերանայվել է ՀՌԿԿ-Հայաստանի և պատվիրատուի կողմից: Միաժամանակ բոլոր փոփոխությունները փոխանցվել են հարցաթերթի անգլերեն տարբերակին: Այս նախագծի շրջանակում հետադարձ թարգմանություն տեղի չի ունեցել:

Նախնական թեստավորում

Հարցաթերթը նախապես փորձարկվել է հուլիսի 5-12-ը՝ հինգ վերապատրաստված հարցազրուցավարների կողմից: Ընդհանուր առմամբ, կատարվել է 28 հարցում: Հարցազրույցների միջին տևողությունը 33 րոպե էր:

Հարցաթերթիկի հարցերի և հասկացությունների հետ կապված խնդիրներ:

- ◁ Հարցվողները հիասթափված էին SS-ի անդամների վերաբերյալ հարցերից և այն փաստից, որ նրանք ստիպված էին այս տեղեկատվությունը մեկից ավելի անգամ տալ:
- ◁ Հարցվողներին զայրացրել են նաև SS այլ անդամների վերաբերյալ հարցերը:
- ◁ Դժվարություններ կային հաշմանդամության կատեգորիայի վերաբերյալ հարցերի հետ կապված:
- ◁ Հարցվածներից շատերը հրաժարվել են մասնակցել հարցմանը, երբ լսել են «աղքատության չափում» արտահայտությունը, քանի որ իրենք իրենց «աղքատ» չեն համարել:

Դաշտային աշխատանքներ

Դաշտային աշխատանքն իրականացվել է 2021 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 23-ը: Դաշտային աշխատանքների անձնակազմը բաղկացած է եղել 34 հոգուց: Հարցազրուցավարների մեծ մասը նոր էին, և սա նրանց առաջին համագործակցությունն էր ՀՌԿԿ-Հայաստանի հետ: Եթե ճիրակում և Լոռիում հարցազրուցավարների մի մասը փորձառու էր և մի քանի տարի աշխատել է ՀՌԿԿ-Հայաստանի հետ, Տավուշում բոլորը նոր էին: Մեկօրյա դաշտային ուսուցում կազմակերպվել է բոլոր մարզերի դաշտային աշխատողների համար՝ Լոֆթ համատեղ աշխատանքային տարածքում: Դասընթացի ընթացքում հարցազրուցավարները կիրառել են հարցաթերթը, ստացել ընտրանքային հրահանգները և քննարկել հնարավոր խնդիրները կամ մարտահրավերները, որոնք կարող են առաջանալ դաշտային աշխատանքի ընթացքում:

Հարցման համակարգում

Դաշտային աշխատանքների համակարգողը պատասխանատու էր երեք մարզերում դաշտային աշխատանքների ընդհանուր կառավարման և որակի վերահսկման համար: Ընդհանուր կառավարչական և տեխնիկական վերահսկողությունն իրականացվել է ՀՌԿԿ-Հայաստանի դաշտային աշխատանքների համակարգողի և Տվյալների նախաձեռնության ծրագրի պատասխանատուի կողմից: Հարցազրուցավարներն ամենօրյա կապի մեջ են եղել համակարգողի հետ, որպեսզի վերջիններս տեղեկացվեն դաշտային աշխատանքների ընթացքի մասին և անհրաժեշտության դեպքում համապատասխան ցուցումներ տան: Տվյալները մշտադիտարկվել են ամեն օր: Հարցազրուցավարներին անմիջապես հրահանգներ են տրվել տվյալների հավաքագրման ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ:

Հիմնվելով տվյալների բազայի ամենօրյա մոնիտորինգի և նախնական վերլուծության վրա՝ տվյալների հավաքագրման թիմի և հետազոտության գծով տնօրենի հետ քննարկման արդյունքում մի քանի փոփոխություններ են կատարվել հարցաշարում: Փոփոխություններ են կատարվել 3 հարցերի (D16, G18, C7) պատասխաններում պատասխանողների կողմից հաճախակի հիշատակվող «այլ» տարբերակների քանակը նվազեցնելու նպատակով:

Տվյալների մաքրման գործընթացի շրջանակներում հետադարձ ստուգման զանգեր են կատարվել տվյալներում անհամապատասխանությունները շտկելու նպատակով:

Դաշտային աշխատանքի կազմակերպում

Դաշտային աշխատանքների ընդհանուր պլանավորումը և նյութատեխնիկական ապահովումը ամրագրված են դաշտային աշխատանքների պլանում: Տվյալների հավաքագրումը, սակայն, խստորեն տեղի չի ունեցել ըստ նախապես որոշված ընտրանքի: Հարցազրուցավարները նույն մարզերից էին և տվյալների հավաքագրումը կազմակերպվել է տեղում նախնական համաձայնությամբ և դաշտային աշխատանքների համակարգողի ցուցումներով: Լոգիստիկան կազմակերպվել է տեղում օգտվելով հասարակական տրանսպորտից, երբ այն հասանելի է, կամ այլ կերպ՝ օգտագործելով մասնավոր վարորդներ: Վարորդները նախկինում աշխատել են ՀՌԿԿ-ի հետ:

Միջավայրի բարենպաստությունը

Հարցազրույցների ընդհանուր մթնոլորտը Հայաստանում կարելի է համարել ոչ բարենպաստ՝ ելնելով մեթոմների բարձր ցուցանիշներից: Հատկապես բարձր է եղել մեթոմը Տավուշի սահմանամերձ համայնքներում: Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող սահմանային բանակցությունների պատճառով մարդիկ անվստահությամբ էին վերաբերվում հարցազրույցավարներին և ընդհանրապես հարցումներին:

Փաստացի արձագանքման մակարդակը

Հաջողված ՀՀ այցելությունների միայն 34%-ն է ավարտվել հարցազրույցով:

Հարցազրույցների փորձ

| Տնային տնտեսությունների այցելությունների ընդհանուր թիվը | Ոչ հաջողված այցելության քանակը* | Մեթոմ | Ընդհատված հարցումները | Համաձայնում | Հարցվողների հասանելիության գործակիցը** | Պատասխանների գործակիցը*** |
|---|---------------------------------|-------|-----------------------|-------------|--|---------------------------|
| 7816 | 2532 | 2574 | 0 | 2695 | 68% | 34% |

* Ներառյալ հետևյալ դեպքերը. SS-ն փակ է. SS-ն ինքնամեկուսացման մեջ է. մեծահասակները տանը չեն: պատասխանողն ունի լեզվական խոչընդոտներ. SS-ն անհասանելի է:

** SS-ի հաջող այցելությունների տոկոսը՝ SS ընդհանուր այցելությունների փորձերի ընդհանուր թվից:

*** Համաձայնությունների տոկոսը SS այցի փորձերի ընդհանուր թվից:

Տվյալների մշակում

Հարցազրույցի սկզբնական տվյալները հավաքագրվել են CAPI ձևաչափով՝ SurveyCTO ծրագրաշարի միջոցով: Ծրագիրը ավտոմատացրել է բաց թողնելու բոլոր օրինաչափությունները և թույլ չի տվել առաջ գնալ առանց հարցը ավարտելու, հետևաբար բաց թողնելու սխալներ կամ բացակայող դաշտեր չեն եղել: Ծրագիրը թույլ է տալիս ուղղակիորեն ներբեռնել SPSS տվյալների բազան՝ հետևաբար վերացնելով տվյալների մուտքագրման սխալները: Հաճախականությունները և խաչաձև վերլուծություններն օգտագործվել են՝ բացահայտելու բացառություններ (outliers), կրկնություններ և գործիքի տրամաբանությանը չհամապատասխանող տվյալներ: Մեկ կողավորող կողավորել է բոլոր բաց հարցերի և «այլ» տարբերակների պատասխանները: Վերջինս բառացի թարգմանել է պատասխանները անգլերեն և ծածկագրել դրանք:

Դասեր ապագա հարցումների համար

Նախնական թեստում բացահայտված խնդիրներից բացի, հարցազրուցավարները նշել են հետևյալ խնդրահարույց ոլորտները.

- ◁ Տավուշի սահմանամերձ համայնքների հարցվողները անվստահությամբ և երբեմն նույնիսկ կոպիտ են արտահայտվել հարցազրուցավարների նկատմամբ՝ պայմանավորված բանակցային տարածքների/անկլավների հետ կապված լարված մթնոլորտով:
- ◁ Հարցվողները դժվարություններ են ունեցել մեկ ամսվա ընթացքում կոնկրետ ապրանքների և ծառայությունների միջին ծախսերը հաշվարկելու հարցում: Այս հարցերն ունեին բարձր ճանաչողական ծանրաբեռնվածություն, և դրանցից մի քանիսն ունեին «9գիտեմ» պատասխանների բավականին բարձր ցուցանիշներ (մինչև 17%):
- ◁ Դժվարություններ կային արական սեռի հարցվողների հետ հարցազրույցներ անցկացնելու հարցում, քանի որ գյուղական համայնքներում ամռանը նրանք կամ աշխատանքային միգրացիայի մեջ են, կամ ամբողջ օրը գյուղատնտեսական գործունեությամբ են զբաղվում և ցերեկային ժամերին տանը հասանելի չեն:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԲԱԻ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՇԵՄԵՐԸ

Հիմնարար կարիքներ

| | |
|--|---|
| Ծայրահեղ պարենային աղքատություն | Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե ՏՏ չափահասի սննդի սպառումը ցածր է պարենային աղքատության գծից (23763 ԲՅ դրամ): |
| Արժանապատիվ կյանք | Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե հարցվողները նշում են, որ բավարար գումար չկա ամենօրյա սննդի կամ հագուստի համար: Հարցման ութը հարցերի տվյալներ օգտագործվել են այս ցուցանիշով զրկվածությունը որոշելու համար, ներառյալ մեկ հարց, որն ուսումնասիրում էր սննդի մասին անհանգստանալու կամ փողի կամ այլ ռեսուրսների սղության պատճառով սոված մնալու հետ կապված մի շարք հարցեր: Եթե բոլոր ութ հարցերի պատասխանների հիման վրա տնային տնտեսությունը համարվել է զրկված, ապա ցուցիչով այն համարվել է զրկված: |
| Մարդասիրական օգնություն | Տնային տնտեսությունը համարվել է զրկված, եթե վերջին 12 ամիսների ընթացքում ստացել է նման օգնություն: Մարդասիրական օգնության ցուցանիշի ներքո հարցվողներին հարցրել են, թե արդյոք նրանց ընտանիքները գրանցված են Աղքատության ընտանեկան նպաստների համակարգում: Հարցվածներին նաև հարցրել են, թե արդյոք նրանց ընտանիքները նախորդ 12 ամիսների ընթացքում ստացել են այլ մարդասիրական նպաստներ, բացի Աղքատության ընտանեկան նպաստների համակարգով նախատեսվածներից: |
| Փոխանցումներից կախվածություն | Տրանսֆերտներից կախվածության ցուցանիշը վերաբերում է այն տնային տնտեսություններին, որոնց սպառման մակարդակն ավելի ցածր է, քան պարենային աղքատության գիծը ստացված փոխանցումները նվազեցնելուց հետո. այդպիսի տնային տնտեսությունները համարվել են զրկված: Զրկված են համարվել նաև տրանսֆերտներ չստացած, բայց աղքատության պարենային գծից քիչ սպառած տնային տնտեսությունները: Հարցվողներին հարցրել են, թե արդյոք նախորդ տարվա ընթացքում իրենց ընտանիքի անդամներից որևէ մեկը ժամանակավոր բացակայել է մինչև 12 ամիս: |

Բնակարանային պայմաններ

| | |
|--|--|
| Սուբյեկտիվ բնակարանային պայմաններ | Տնային տնտեսությունները համարվել են զրկված, եթե իրենց բնակարանային պայմանները բնութագրել են որպես «վատ» կամ «չատ վատ»: |
| Պատշաճ բնակարանային պայմաններ | Տնային տնտեսությունները համարվել են զրկված, եթե նրանք բողոքել են իրենց բնակարանային և դրա միջավայրի վերաբերյալ հետևյալ խնդիրների առնվազն մեկ երրորդի |

| | |
|---|--|
| | <p>վերաբերյալ՝ մակերեսի սակավություն, հարևանների և շրջապատի աղմուկ, վատ լուսավորություն, ջեռուցման պակաս, խոնավություն, կաթող տանիք, քանդված պատեր և հատակ, քանդված փեղկեր և դռներ, ծանրաբեռնված երթևեկություն, արդյունաբերական արտանետում, հաճախակի չաշխատող վերելակ, ջրամատակարարման և աղբահավաքման որակ, բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և բակի սպասարկումը:</p> |
| Գերբնակեցում | <p>Տնային տնտեսությունը համարվել է գերբնակեցված, եթե հետևյալ պայմաններից որևէ մեկին չի բավարարել.</p> <p>Մեկ սենյակ տնային տնտեսության համար; Ընտանիքում մեկ սենյակ մեկ զույգի համար; Մեկ սենյակ 18 և ավելի տարեկան յուրաքանչյուր անհատի համար; Մեկ սենյակ 12-ից 17 տարեկան նույն սեռի մեկ զույգի կամ անհատի համար. Մեկ սենյակ 12-ից 17 տարեկան յուրաքանչյուր անհատի համար, որը ներառված չէ նախորդ կատեգորիայում. Մեկ սենյակ մինչև 12 տարեկան երեխաների համար:</p> <p>Այն տնային տնտեսությունները, որոնք ունեցել են գերբնակեցված պայմաններում ապրող անհատներ, համարվել են զրկված: Սենյակների հաշվարկի մեջ ներառված չեն բաղնիքը, սանհանգույցը կամ խոհանոցը:</p> |
| Առողջ ջեռուցում | <p>Զրկված են համարվել այն տնային տնտեսությունները, որոնք ջեռուցվել են նավթով և դիզելառեվիքով, փայտով կամ կենտրոնացված ջեռուցումից, էլեկտրաէներգիայից, բնական գազից կամ հեղուկ գազից բացի այլ աղբյուրներից: Հարցման ընթացքում հարցվածներին հարցրել են իրենց տները տաքացնելու առաջնային մեթոդների մասին:</p> |
| Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մշտական հասանելիություն | <p>Այն տնային տնտեսությունները, որոնք ամսվա յուրաքանչյուր օրվա և օրվա յուրաքանչյուր ժամի կենտրոնացված ջրամատակարարման հնարավորություն չեն ունեցել, համարվել են զրկված:</p> |
| Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն | <p>Ցուցանիշը վերաբերում էր այն տնային տնտեսություններին, որոնք չունեին կենտրոնացված սանիտարական համալիր կամ կենցաղային աղբի հեռացում՝ օգտագործելով աղբամուղ կամ հատուկ մետաղյա արկղ: Զրկված են համարվել այն տնային տնտեսությունները, որոնք օգտագործել են աղբահանության այլ միջոցներ կամ չեն ունեցել գործող կենտրոնացված սանիտարական համալիր:</p> |
| Հոսող տաք ջուր | <p>Տաք հոսող ջրի ցուցիչը վերաբերում է այն տնային տնտեսությունները, որոնք չեն ունեցել գործող հոսող տաք ջրի համակարգ:</p> |
| Հանրային ծառայությունների որակ | <p>Ցուցանիշը չափել է տնային տնտեսությունների բավարարվածությունը ինը տարբեր հանրային ծառայություններից՝ ջրամատակարարում, ջրահեռացում, աղբահանություն, հեռախոս, էլեկտրաէներգիա, փոստ, բանկային գործ, ոռոգում և հասարակական տրանսպորտ: Այն տնային</p> |

| | |
|-----------------------------------|--|
| | տնտեսությունները, որոնք գոհ չեն եղել իրենց գնահատած հանրային ծառայությունների ավելի քան մեկ երրորդով, համարվել են զրկված: |
| Տրանսպորտի հասանելիություն | Ցուցանիշը որոշարկում է այն տնային տնտեսությունները, որոնք իրենց բնակավայրերի կամ մարզային քաղաքների կամ շուկաների ճանապարհները նկարագրել են որպես վատ: Քաղաքային բնակավայրերի տնային տնտեսություններին այս հարցը չի տրվել և նրանք չեն համարվել զրկված: |

Կրթություն

| | |
|---|--|
| Միջնակարգ կրթություն | Միջնակարգ կրթության ցուցանիշը սահմանել է այն տնային տնտեսությունները, որոնցում 15 և բարձր տարիքի ոչ մի անդամ չունի հիմնական կրթություն: |
| Կրթական հաստատության պարտադիր հաճախում | Պարտադիր ուսուցման ցուցանիշը ցույց է տվել այն տնային տնտեսությունները, որոնք ունեցել են պարտադիր դպրոցական տարիքի առնվազն մեկ երեխա (6-17 տարեկան), որը դպրոց չի հաճախել: Այդ տարիքի երեխա չունեցող տնային տնտեսությունները զրկված չեն համարվել: |
| Որակյալ կրթական ծառայություններ | Ցուցանիշը որոշարկել է այն տնային տնտեսությունները, որոնք գոհ չեն կրթական ծառայություններից: |
| Կրթության հասանելիություն | Եթե մանկապարտեզ, տարրական կամ միջնակարգ դպրոց հաճախելու համար որևէ երեխա ծախսել է ավելի քան 30 րոպե քայլելու կամ հեծանիվ վարելու համար, ապա տնային տնտեսությունը համարվել է զրկված: Զրկված են համարվել նաև այն տնային տնտեսությունները, որոնցում ցանկացած երեխա դպրոց գնալիս մեկ ժամից ավելի է անցկացրել այլ տրանսպորտային միջոցներում: Քաղաքային տնային տնտեսություններին այս հարցը չի տրվել և նրանք զրկված չեն համարվել: |

Աշխատանք

| | |
|-------------------------------------|--|
| Աշխատաշուկայի մասնակցություն | Աշխատաշուկայում մասնակցության ցուցանիշը վերաբերում է այն տնային տնտեսություններին, որոնցում աշխատանքային տարիքի (15-75) անձանց կեսից ավելին ներառված չեն եղել աշխատուժի մեջ: Զրկված չեն համարվել այն տնային տնտեսությունները, որոնք չեն ունեցել աշխատունակ տարիքի անձ: |
| Երկարաժամկետ գործազրկություն | Տնային տնտեսությունը համարվել են զրկված, եթե աշխատունակ տարիքի անդամներից որևէ մեկը մեկ և ավելի տարի գործազուրկ է եղել և ակտիվորեն աշխատանք է փնտրել: Զրկված չեն համարվել այն տնային |

| | |
|------------------------------|--|
| | տնտեսությունները, որոնք աշխատանքային տարիքի անդամներ չեն ունեցել: |
| Արժանապատիվ աշխատատեղ | Տնային տնտեսությունները համարվել են զրկված, եթե բոլոր աշխատող անդամները կամ ինքնագբաղված են կամ նպաստում են ընտանեկան բիզնեսին: Այս ցուցանիշով ինքնաբերաբար զրկված են համարվել նաև այն տնային տնտեսությունները, որոնք զրկված են եղել աշխատանքի նախորդ երկու ցուցանիշներով: Աշխատունակ տարիքի անդամ չունեցող տնային տնտեսությունները զրկված չեն համարվել: |

Առողջապահություն

| | |
|---|---|
| Առողջապահական ծառայությունների մատչելիություն | Ցուցանիշը որոշարկում է այն տնային տնտեսությունները, որոնք միջոցներ չեն ունեցել բուժաստատությունում անհրաժեշտ առողջապահական ծառայությունների (բացառությամբ ատամնաբուժական ծառայությունների) համար վճարելու, ինչպիսիք են թեստերը, հետազոտությունները և բժշկի նշանակումները: Տնային տնտեսությունները զրկված են եղել, եթե որևէ անդամ ի վիճակի չի եղել նման ծառայություններից օգտվել նախորդ 30 օրվա ընթացքում: Նրանք, ովքեր նման անդամ չեն ունեցել, ովքեր վերջերս դիմել են բժշկի, չեն համարվել զրկված: Հարցվողներին հարցրել են՝ արդյոք նրանք դիմել են բժշկական օգնության նախորդ 30 օրվա ընթացքում, և եթե պատասխանը եղել է ոչ, ապա նրանց խնդրել են նշել բժշկական օգնության չդիմելու հիմնական պատճառը: |
| Սովորական գործունեության դադարեցում | Ցուցանիշը վերաբերում էր առնվազն մեկ անդամ ունեցող տնային տնտեսություններին, ովքեր դադարեցրել են իրենց սովորական գործունեությունը հիվանդության, վնասվածքի կամ վատառողջության պատճառով: |
| Առողջապահական ծառայությունների հասանելիություն | Ցուցանիշը վերաբերում է գյուղական բնակավայրերի այն տնային տնտեսություններին, որոնք հասանելիություն չեն ունեցել առողջապահական հաստատություններին, շտապ օգնության ծառայություններին կամ իրենց հարևանությամբ գտնվող դեղատներին: Այն տնային տնտեսությունները, որոնք չեն կարողացել հասնել իրենցից ամենամոտ հաստատությանը 30 րոպեի կամ ավելի քիչ ժամանակում հասանելի տրանսպորտային միջոցներով, համարվել են զրկված: Քաղաքային տնային տնտեսությունները զրկված չեն համարվել: |
| Առողջապահական ծառայությունների որակ | Ցուցանիշը որոշարկել է այն տնային տնտեսությունները, որոնք գոի չեն առողջապահական ծառայություններից: |

ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ԿԻՒ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՇԵՄԵՐԸ

| | |
|---|--|
| Ինտերնետի հասանելիություն | Ինտերնետային ծառայություններ մատուցողի միջոցով ինտերնետ կապի հասանելիություն չունեցող տնային տնտեսությունները համարվել են զրկված: Բջջային հեռախոսի ծառայություններ մատուցողները չեն համարվում կենցաղային ինտերնետ ծառայություններ մատուցողներ: |
| Բազմասերունդ տնային տնտեսություն | Տնային տնտեսությունները համարվել են բազմասերունդ և խոցելի, եթե դրանցում կան և՛ երեխաներ (0-15 տարեկան), և՛ տարեցներ (65+ տարեկան): |
| Տարիք | Տնային տնտեսությունները համարվել են խոցելի, եթե ընտանիքի անդամներից որևէ մեկը 60 տարեկան և ավելի բարձր տարիքի է եղել: |

Աշխատանք

| | |
|-------------------------------------|--|
| Աշխատաշուկայի մասնակցություն | Աշխատաշուկայում մասնակցության ցուցանիշը վերաբերում է այն տնային տնտեսություններին, որոնցում աշխատանքային տարիքի (15-75) անձանց կեսից ավելին ներառված չեն եղել աշխատուժի մեջ: Ջրկված չեն համարվել այն տնային տնտեսությունները, որոնք չեն ունեցել աշխատունակ տարիքի անձ: |
| Երկարաժամկետ գործազրկություն | Տնային տնտեսությունը համարվել են զրկված, եթե աշխատունակ տարիքի անդամներից որևէ մեկը մեկ և ավելի տարի գործազուրկ է եղել և ակտիվորեն աշխատանք է փնտրել: Ջրկված չեն համարվել այն տնային տնտեսությունները, որոնք աշխատանքային տարիքի անդամներ չեն ունեցել: |
| Արժանապատիվ աշխատատեղ | Տնային տնտեսությունները համարվել են զրկված, եթե բոլոր աշխատող անդամները կամ ինքնազբաղված են կամ նպաստում են ընտանեկան բիզնեսին: Այս ցուցանիշով ինքնաբերաբար զրկված են համարվել նաև այն տնային տնտեսությունները, որոնք զրկված են եղել աշխատանքի նախորդ երկու ցուցանիշներով: Աշխատունակ տարիքի անդամ չունեցող տնային տնտեսությունները զրկված չեն համարվել: |

Բնակարանային պայմաններ

| | |
|---|--|
| Առողջ ջեռուցում | <p>Զրկված են համարվել այն տնային տնտեսությունները, որոնք ջեռուցվել են նավթով և դիզվառելիքով, փայտով կամ կենտրոնացված ջեռուցումից, էլեկտրաէներգիայից, բնական գազից կամ հեղուկ գազից բացի այլ աղբյուրներից:</p> <p>Չարցման ընթացքում հարցվածներին հարցրել են իրենց տները տաքացնելու առաջնային մեթոդների մասին:</p> |
| Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մշտական հասանելիություն | <p>Այն տնային տնտեսությունները, որոնք ամսվա յուրաքանչյուր օրվա և օրվա յուրաքանչյուր ժամի կենտրոնացված ջրամատակարարման հնարավորություն չեն ունեցել, համարվել են զրկված:</p> |
| Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն | <p>Յուրանիշը վերաբերում էր այն տնային տնտեսություններին, որոնք չունեին կենտրոնացված սանիտարական համալիր կամ կենցաղային աղբի հեռացում՝ օգտագործելով աղբամուղ կամ հատուկ մետաղյա արկղ: Զրկված են համարվել այն տնային տնտեսությունները, որոնք օգտագործել են աղբահանության այլ միջոցներ կամ չեն ունեցել գործող կենտրոնացված սանիտարական համալիր:</p> |

Տնային տնտեսության կազմը

| | |
|---------------------|--|
| Գերբնակեցում | <p>Տնային տնտեսությունը համարվել է գերբնակեցված, եթե հետևյալ պայմաններից որևէ մեկին չի բավարարել.</p> <p>Մեկ սենյակ տնային տնտեսության համար: Ընտանիքում մեկ սենյակ մեկ զույգի համար: Մեկ սենյակ 18 և ավելի տարեկան յուրաքանչյուր անհատի համար: Մեկ սենյակ 12-ից 17 տարեկան նույն սեռի մեկ զույգի կամ անհատի համար. Մեկ սենյակ 12-ից 17 տարեկան յուրաքանչյուր անհատի համար, որը ներառված չէ նախորդ կատեգորիայում. Մեկ սենյակ մինչև 12 տարեկան երեխաների համար:</p> <p>Այն տնային տնտեսությունները, որոնք ունեցել են գերբնակեցված պայմաններում ապրող անհատներ, համարվել են զրկված: Սենյակների հաշվարկի մեջ ներառված չեն բաղնիքը, սանհանգույցը կամ խոհանոցը:</p> |
|---------------------|--|

Առողջություն

| | |
|---|---|
| Առողջապահական ծառայությունների հասանելիություն | <p>Յուրանիշը վերաբերում է գյուղական բնակավայրերի այն տնային տնտեսություններին, որոնք հասանելիություն չեն ունեցել առողջապահական հաստատություններին, շտապ օգնության ծառայություններին կամ իրենց հարևանությամբ գտնվող դեղատներին: Այն տնային տնտեսությունները, որոնք չեն կարողացել հասնել իրենցից ամենամոտ հաստատությանը 30 րոպեի կամ ավելի քիչ ժամանակում հասանելի տրանսպորտային միջոցներով, համարվել են զրկված: Քաղաքային տնային տնտեսությունները զրկված չեն համարվել:</p> |
|---|---|

**Առողջապահական
ծառայությունների
մատչելիություն**

Ցուցանիշը որոշարկում է այն տնային տնտեսությունները, որոնք միջոցներ չեն ունեցել բուժիաստատությունում անհրաժեշտ առողջապահական ծառայությունների (բացառությամբ ատամնաբուժական ծառայությունների) համար վճարելու, ինչպիսիք են թեստերը, հետազոտությունները և բժշկի նշանակումները: Տնային տնտեսությունները գրկված են եղել, եթե որևէ անդամ ի վիճակի չի եղել նման ծառայություններից օգտվել նախորդ 30 օրվա ընթացքում, նրանք, ովքեր նման անդամ չեն ունեցել, ովքեր վերջերս դիմել են բժշկի, չեն համարվել գրկված: Հարցվողներին հարցրել են՝ արդյոք նրանք դիմել են բժշկական օգնության նախորդ 30 օրվա ընթացքում, և եթե պատասխանը եղել է ոչ, ապա նրանց խնդրել են նշել բժշկական օգնության չդիմելու հիմնական պատճառը:

Յետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Յայաստան
հիմնադրամ. (2023): [Յամայնքային բազմաչափ աղքատությունը
Յայաստանում](#): Երևան: Եվրոպական [REDACTED]

*Այս հրատարակումը պատրաստվել է Եվրոպական միության
ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար
պատասխանատվություն է կրում Յետազոտական ռեսուրսների
կովկասյան կենտրոն-Յայաստան հիմնադրամը, և պարտադիր
չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*

© – 2023 – [REDACTED] ռեսուրսների կովկասյան կենտրոն-
Յայաստան:

Բոլոր իրավունքները պաշտպանված են

Արտոնագիր՝ Եվրոպական միություն

Յետադարձ կապ՝ crrc@crrc.am | crrc.am